Azg
Ազգ
6 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1997 ՇԱԲԱԹ #170 (1424)

Սրտնեղած Ալիեւը հեռեւեց Շեւարդնաձեի օրինակին եւ Մոսկվա չմեկնեց

5 ՍԵՊՏԵՄԲԵՐ. RFI. «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»- Ըստ Ֆրանսդրեսի Մոսկվայից հղած հաղորդագրության. Ադրբեջանի նախագահ Ալիեւը չընդունեց Մոսկվայի 850-ամյակին նվիրված տոնակատարություններին մասնակցելու. ինչպես նաեւ Բորիս Ելցինի հետ հանդիպելու հրավերը: Ալիեւի մերժումը կապված է Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ վերջերս կնքված պայմանագրի հետ. ըստ որի նախատեսվում է զինված օգնություն ցուցաբերել ռազմական սպառնալիքի դեպքում: Ինտերֆաքս գործակալությանը Ադրբեջանի նախագահի վարչակազմից տեղեկացրել են. թե Հեյդար Ալիեւի որոշման դրդապատճառները հայտնի չեն: Սակայն միեւնույն ժամանակ Ինտերֆաքսը վկայակոչում է Բաքվի մի պաշտոնյայի. որն ասել է. «Անցյալ շաբաթվա վերջին ստորագրված ռուս-հայկական պայմանագրի ռազմական կողմը տեղիք է տվել պաշտոնական Բաքվին ենթադրելու. որ հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման գործում իբրեւ չեզոք միջնորդ հանդիսանալու Կրեմլի մտադրություններն անկեղծ չեն»:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Վերահսկիչ պալատը 2 գործ ուղարկել է դատախազություն

Բաքկեն Արարքցյանը արշակուրդից հետո մարտականորեն է տրամադրված

Ազգային ժողովի նախագահ Բաքկեն Արարքցյանը երեկվա ասուլիսում հիմնականում անդրադարձավ առաջիկա նստաշրջանի օրակարգային հարցերին նշելով. որ ամենակարեւորը 1998 թ. բյուջեի ընդունումն է: Աժ նախագահը նշեց. որ վարչապետի հետ հանդիպման ընթացքում հստակ դիահանջներ են դրվել. թե ինչպիսին պետք է լինի բյուջեն: Այնուհետեւ. Բ. Արարքցյանը խոսեց Աժ վերահսկիչ պալատի աշխատանքի մասին. նշելով. որ ուսումնասիրված յոթ գործերից երկուսը ուղարկվել է դատախազություն: Դրանցից մեկը Համաշխարհային բանկի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված կառուցվածքային բարեփոխումների ծրագրի ուսումնասիրումն է. իսկ մյուսը Չինաստանի կառավարության կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 30 մլն յուանի (3.5 մլն դոլարի) համարժեք առյուծային վարկի ստացման. օգտագործման եւ հետադարձման հետադարձավճարներն է եւ արդյունավետությունը: Այդ յոթ գործերի մասին տեղեկանքը երկուշաբթի կբաժանվի պատգամավորներին. իսկ մինչ այդ Աժ նախագահը զգուշացրեց. թե տվյալ գործերի հանձնումը դատախազություն դեռեւս չի նշանակում. թե մեղադրական եզրակացություն է ներկայացվում. բանի որ անմեղության կանխավարկածը պահպանվում է: Եվս 5 գործի քննություն շարունակվում է: Մեր այն հարցին. թե որեւէ անուն-ազգանուն նշվո՞ւմ է վերահսկիչ պալատի տեղեկանքում. Բ. Արարքցյանը պատասխանեց. թե ոչ մի անուն չկա. բանզի դա ընդամենը առաջնային ստուգում է: Հետագայում նա չբացառեց. որ իրական գործ հարուցելու դեպքում կարող են հետաքրքիր գտնել պատասխանատուներին. մանավանդ որ որոշ փաստաթղթեր կան նաեւ վերահսկիչ պալատի տրամադրության տակ:

Չինաղարտության օրենքի հարցում Արարքցյանը չի փոխել իր սկզբունքները. եւ ամառային հանգստից հետո պատրաստվում է կառավարության հետ բանակցություններ վարել: Անդրադառնալով «Բելառուս-Ռուսաստան» միությանը Հայաստանի միանալու նախաձեռնությանը. Աժ նախագահը շեշտեցրեց. որ ինքը հանդիպել է Թ. Գոլյանի հետ: Բայց նրա ասելով պետք է նախնատաց գիտակցենք. թե ի՞նչ առավելություն է տալու այդ միությունը Հայաստանին եւ ապավվկ եւս Ղարաբաղին:

Տես # էջ 2

ՇՐՋԱՆ

Ադրբեջանը բողոքի նոտա հղեց ռուս-հայկական պայմանագրի դեմ

ԲԱՔՈՒ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ- Ինչպես գրել է Բաքվում լույս տեսնող «Պանորամա» թերթը. Ադրբեջանի արտգործնախարարության մամլո կենտրոնից հաղորդել են. որ սեպտեմբերի 4-ին Ադրբեջանում Ռուսաստանի Դաշնության դեսպան Ալեքսանդր Բլոխինը հրավիրվել է արտգործնախարարություն:

Ադրբեջանի արտգործնախարար Հասան Հասանովը նրան է հանձնել Ռուսաստանի Դաշնության արտգործնախարարությանն ուղղված նոտան. որում խորին մտահոգություն է հայտնվել օգոստոսի 29-ին Մոսկվայում Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ ստորագրված բարեկամության. համագործակցության եւ փոխօգնության պայմանագրի առնչությամբ. որի բազմաթիվ կետեր. ըստ Ադրբեջանի ԱԳ նախարարության. առնվազն անհասկանալի են՝ հուլիսի 3-ին Ռուսաստանի Դաշնության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ ստորագրված պայմանագրի լույսի ներքո:

Նկատի ունենալով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ առկա զինված հակամարտությունը. որը Ադրբեջանի Հանրապետությունը եւ մյուս երկրները որակում են որպես Հայաստանի կողմից զինված ագրեսիա. ինչպես նաեւ այն փաստը. որ Ռուսաստանի Դաշնությունը ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի համանախագահ երկրներից է եւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ. Ադրբեջանի արտգործնախարարությունը անհրաժեշտ է համարել արտահայտել իր խորին մտահոգությունը Հայաստանի ու Ռուսաստանի միջեւ կնքված պայմանագրի մի շարք հոդվածների առնչությամբ:

Ադրբեջանի հղած նոտայում մանրամասնորեն թվարկվում են պայմանագրում Ռուսաստանի կողմից տրված այն երաշխիքները Ադրբեջանին եւ Հայաստանին. որոնք լրջորեն հակասում են միմյանց:

Նույն օրը Ադրբեջանի արտգործնախարարություն են հրավիրվել ԱՄՆ-ի. Մեծ Բրիտանիայի. Ֆրանսիայի. Իտալիայի. Գերմանիայի. Թուրքիայի. Ղազախստանի. Ուկրաինայի. Վրաստանի եւ Իրանի դիվանագիտական բաժինների ղեկավարները. որոնց իրազեկ է դարձվել այդ նոտային:

«ԼՈՒԿՕՅԼԻ» նախագահ Ալեքպերովը հուսադրում է Բաքվին

ԲԱՔՈՒ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ- Բաքվում շարունակվում են քննարկումները «Քյափազ» հանքավայրի շուրջ: Ըստ «Ազատություն» ռադիոկայանի հաղորդման. Բաքու ժամանած «ԼՈՒԿՕՅԼԻ» նախագահ Ալեքպերովը Ադրբեջանի պետական նավթաընկերության նախագահի եւ պետության ղեկավարի հետ դոնփակ բանակցություններ է անցկացրել: Ստացված հաղորդումների համաձայն. Ալեքպերովը արտահայտել է այդ նախագծին մասնակցելու իր ընկերության մտադրությունը: Ալեքպերովը հաղորդել է. որ «Ռոսնեֆտ» ընկերությունը. որը չեղյալ է հայտարարել պայմանագիրը. ոչ մի փաստաթուղթ չի ուղարկել Ադրբեջանի պետական նավթաընկերությանը. Մոտ ժամանակներս վերջինս «Ռոսնեֆտ» ընկերությանը բաց հարցում է անելու պայմանագրի նկատմամբ նրա դիրքորոշման առթիվ:

Արտգործնախարար Հասանովը հաղորդել է. որ Թուրքմենիան՝ ի պատասխան Ադրբեջանի երկրորդ նոտայի. ճանաչել է Կասպից ծովը հատվածների բաժանելու սկզբունքը: Նախարարի խոսքերով. ներկայումս ճշգրտվում է այդ հարցի առնչությամբ երկու երկրների փորձագետների հանդիպման ժամանակը: Հասանովը հայտարարել է. որ «Ազերիին» եւ «Չըրագին» վերաբերող հարցերը պետք է լուծվեն երկկողմ հանդիպումների ժամանակ:

Ռոխլինը կամ պիտի «փոխի կաշին», կամ էլ հեռանա

ՄՈՍԿՎԱ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ- Ալեքսանդր Շոխինը, որ չորեքշաբթի ընտրվել է «Մեր տունը Ռուսաստանն է» խորհրդարանական խմբակցության նոր ղեկավար, առաջարկել է անհապաղ էվեակել Դումայի պաշտպանության կոմիտեի նախագահ Լեւ Ռոխլինին խմբակցությունից հեռացնելու օգտին: Այս մասին ՌԻԱ-«Նովոստի» գործակալությանը հաղորդել է խմբակցության անդամներից մեկը. որ ցանկացել է անհայտ մնալ: Իսկ առայժմ վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինը մտադիր է մեկ անգամ եւս հանդիպել Ռոխլինի հետ եւ առաջարկել նրան կամ հրաժարվել իր գործունեությունից. որ հակասում է կուսակցության ուղեգծին. կամ կամավոր հեռանալ խմբակցությունից եւ պաշտպանության կոմիտեի նախագահի պաշտոնից:

ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանին

Մեծարգո պարոն նախագահ

Հայաստանի Ռազմավարական ազգայական կուսակցության անունից ջերմորեն շնորհավորում ենք Ձեզ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ:

Վստահ ենք. որ Դուք այդ բարձր եւ պատասխանատու պաշտոնի ընձեռած բոլոր հնարավորություններն ի սպաս կդնեք Արցախի ժողովրդի բարօրությունն ու խաղաղությունն ապահովելուն:

Ձեզ ի սրտե մաղթում ենք հաջառողջություն. ամուր կամք եւ Ձեր առջեւ դրված խնդիրներն առավելագույնս շահեկան լուծելու կարողություն:

Միաժամանակ հավաստում ենք մեր զորակցությունն այդ սուրբ գործին դիտելով այն իբրեւ Հայ դատի բաղկացուցիչ մաս:

ՀՈՍԿ ՀԱՅԵՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Մոսկվան հերքեց Լեբեդի «միջուկային» հայտարարությունը

5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»- Ռուսաստանի պաշտպանության նախարարությունն այսօր հերքեց Ռուսաստանի ԱԽ-ի նախկին ղեկավար Ալեքսանդր Լեբեդի այն հայտարարությունը. թե Ռուսաստանի բանակը կորցրել է շուրջ հարյուր միջուկային ռումբերի հետքը: Նախարարության խոսնակ Վլադիմիր Ուվատենկոն հայտնեց Ռոյթեր գործակալությանը. թե Ռուսաստանի բանակը վերահսկում է երկրում եղած բոլոր միջուկային ռումբերը: Ուվատենկոն նշեց. թե Ալեքսանդր Լեբեդը երբեք չի զբաղվել միջուկային անվտանգության հարցերով. երբ աշխատել է Ռուսաստանի ԱԽ-ի ղեկավար: Երեկ AP գործակալությունը վկայակոչել էր Սպիտակ տան մի պաշտոնյայի. որը հայտնել է. թե Լեբեդի պնդումները հաստատող փաստեր չկան: Լեբեդը այդ հայտարարությամբ հանդես եկավ CBS ամերիկյան հեռուստակայանի հետ իր ունեցած հարցազրույցում: Հարցազրույցը կհեռարձակվի կիրակի օրը: Ալեքսանդր Լեբեդի պնդումներն այսօր հերքեց նաեւ Ռուսաստանի վարչապետը:

ԱՄՆ-ը որոշեց ում ինչքան է տալու. Իսրայելին՝ 3 մլրդ դոլար

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ- ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը հինգշաբթի հավանություն է տվել հաջորդ ֆինանսական տարում 12,3 միլիարդ դոլարի չափով արտասահմանյան օգնության մասին օրինագծին: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման. նախկին ԽՍՀՄ հանրապետություններին որպես օգնություն հատկացված է 625 միլիոն դոլար՝ 275 միլիոն դոլարով պակաս Քլինթոնի վարչակազմի պահանջածից: Արեւելյան Եվրոպայի երկրներին տրամադրվելու է 470 միլիոն դոլար: Ամերիկյան օգնության ամենախոշոր ծրարն ուղարկվում է Մերձավոր Արեւելք. ինչպես որ նախորդ տարիներին. երբեմն միլիարդ դոլար է տրամադրվում Իսրայելին եւ 2,1 միլիարդ դոլար՝ Եգիպտոսին:

Թուրքիայում ձերբակալվել են «Խաղաղության խմբի» 25 անդամներ

ԱՆԿԱՐԱ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ- Թուրքիայի ոստիկանությունը ձերբակալել է մի խումբ միջազգային ակտիվիստների. որոնք պահանջում են խաղաղ միջոցներով կարգավորել քրդական հակամարտությունը: Ըստ «Եվրո-նյուս» հեռուստալրատվության հաղորդման. Ստամբուլի ոստիկանությունը ձերբակալել է 25 մարդու: Նրանց մեծ մասը Արեւմտյան Եվրոպայի ներկայացուցիչներ են: Այդ խմբի անդամները ներկայացնում են մարդու իրավունքների պաշտպանությունը. որը հանդես է գալիս Թուրքիայի եւ քուրդ անջատականների հակամարտության խաղաղ կարգավորման օգտին:

ԹԵԺ ԿԵՏ

«Իսրայելի զինվորական պատմության մեջ մեծագույն աղետը» տեղի ունեցավ Հարավային Լիբանանում

5 ՍԵՊՏԵՄԲԵՐ. BBC. RFI- Հարավային Լիբանանում Իսրայելի բանակն այսօր մեծագույն անհաջողությունն ունեցավ եւ ամենամեծ զոհերը տվեց 1985 թվականից ի վեր. երբ տարածքից մասնակիորեն դուրս բերվեցին Իսրայելի զորքերը: Փորձելով վրեժխնդիր լինել Երուսաղեմում երեկ տեղի ունեցած պայթյունների համար Իսրայելի ընտրյալ զորքերին պատկանող դեսանտայինների ջոկատն անցած գիշեր ուղղաթիռներից բախանցեց Հարավային Լիբանանի Տիր եւ Սիդոն քաղաքների միջեւ ընկած ափամերձ լեռները: Դեսանտայիններին սակայն հայտնաբերեցին ու նրանց վրա գրոհեցին Լիբանանի բանակի ջոկատները եւ մահմեդական «Հըզբոլլահ» ու «Ամալ» կազմակերպությունների զինյալները:

Երեք ժամ տեւած մարտի ընթացքում իսրայելցիներին չկարողացան փրկել օգնության հասած հրթիռակիր ուղղաթիռները. ռազմանավերն ու ռազմօդանավերը: Իսրայելի բանակը հաստատեց. որ այդ մարտի ընթացքում 11 զինվոր է զոհվել եւ մեկ զինվոր էլ անհետ կորել է: Վիրավորվել են մի քանի գրոհայիններ եւ Լիբանանի բանակի զինվորներ. ինչպես նաեւ մի կին. որն այդ ժամանակ այդտեղով մեքենայով անցել է: Վարչապետ Նաթանյահուն Իսրայելի զինվորական պատմության մեջ մեծագույն աղետ անվանեց այդ մարտը: Ըստ Իսրայելի ռադիոյի հաղորդման. դեսանտայինները ծրագրում էին Տիր քաղաքից հյուսիս դարան սարքել մահմեդական գրոհայինների դեմ: Լիբանանում հրավիրված «Հըզբոլլահի» ասուլիսի ժամանակ լրագրողներին ցուցադրվել են իսրայելցի զինվորների դիակները: Իսրայելի կառավարությունը պահանջեց վերադարձնել անհետ կորած մի զինվորի: Ենթադրվում է. որ այդ զինվորն էլ է սպանվել:

ԱԶԳ

ՈՄԲԱՑԻԿ

Հրանուշ Հակոբյան. «Մեր պայքարը պիտի մեծանա գլորվող ձնագնդու պես»

«Պայքար ծխելու դեմ» համաժողովը սոցիալական աղահովության նախարարության հերթական ակցիան էր, որ այս անգամ ընդլայնված գործունեություն ծավալելու մեկնարկի հավակնություն ուներ: Տիկին նախարարը ափսոսանքով հիշեց ծխելու դեմ իր առաջին ելույթը ՀՀ Ազգային ժողովում, որ մենակ էր ընդդիմադիրների մեջ: Սակայն համաժողովի մասնակիցները Հ. Հակոբյանի հետագա բոլոր քայլերի առթիվ իրենց զորակցությունը հայտնեցին: Միջոցառմանը պետական կառույցներից զատ ներկա էին բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, որոնք ստվարացնում են ծխողների դեմ պայքարողների շարքերը:

Հետաքրքրական է, որ տարիներ առաջ կարծիք կար, որ ծխող մարդիկ 50 տարեկանից հետո հիմնականում մահանում են: Ըստ այդմ հաշվարկվում էր, նկատի ունենալով հատկապես պետական ծառայողներին, որ ծխախոտ գնելով նրանք համալրում են բյուջեն, իսկ թոշակի անցնելուց հետո շատ արագ հեռանում են կյանքից և այլևս նրանց համար միջոցներ ծախսելու կարիք չի լինում: Սակայն շատ կարճ ժամանակամիջոցում հետազոտությունները ցույց տվեցին, որ թե ծխողների, թե նրանց շրջապատողների առողջությունը այնքան վնաս է կրում ծխախոտի ծխից, որ ծխախոտի վաճառքից ստացված պետական եկամուտները բազմապատիկ գիջում են դրան: Միացյալ Նահանգներում այդ վնասը գնահատվում է 3 անգամ:

Ընդհանրապես ծխողը հիվանդ մարդ է, եզրակացրին հավաքված մասնագետները: Բանի ոչնչի կախվածություն: Եվ բանի դեռ նրան սովորական մարդ են համարում, պայքարելը դժվարանում է: Ինչո՞ւ վարձակիր հիվանդին մեկուսացնում են, իսկ ծխողին ոչ: Այս առթիվ նրանք որոշեցին դիմում հղել արդյունաբերության նախարարին հետևողական իրականացնելու աշխատանքի հիգիենայի հարցերը, որպեսզի նվազեցնեն մարդկանց, որ չեն ծխում: Որոշում ընդունվեց դիմումներ հղել նաև առողջապահության ու կրթության նախարարություններին բուժիմնարկներում և ուսումնական հաստատություններում ծխելն արգելելու վերաբերյալ որոշումներ ընդունելու համար: Այժմ նման կանոնակարգ հաստատված է միայն թվ: կան ազգային ակադեմիայում: Ի դեպ, թե կրթության թե առողջապահության նախարարները, ինչպես և ՀՀ վարչապետը, չեն ծխում: Ի տարբերություն առողջապահության նախկին նախարար Ա. Բաբլոյանի, որն ինքնաթիռի գրադարանում ծխախոտի գովազդով լրագրողների հարցին ի պատասխան ցուցադրելով որ ֆիրմայի ծխախոտն է ծխում ինքը: Տիկին Հակոբյանը գոհունակությամբ արձանագրեց նաև այն փաստը (տեղեկանալով «Լրագրի» թղթակցությունից), որ Երևանի քաղաքապետը արգելել է ժողովների, խորհրդակցությունների ժամանակ ծխելը: Թե ինչ միջոցներ ձեռք կառնի պրն Սիրաղեղյանը ծխախոտի գովազդային հսկա վահանակների դեմ, նախարարը առաջարկեց տեղեկանալ անձամբ նրանից: Սակայն հակածխախոտային պայքարի հարցերում այսօր հայտնվում են հզոր հակառակորդներ՝ ծխախոտի բիզնեսի արքաները, որոնց չնկատելը ջայլամի կեցվածք է: Դրանք բավականին բանիմաց ուժեր են և այս դեպքում պետք է բանեցնել ճիշտ հարկային քաղաքականություն: Այլ երկրներում ընդունված է ծխախոտային շահույթի մի մասը տրամադրել ծխելու դեմ պայքարի կազմակերպություններին: Սոցիալական աջակցության նախարարը հայտարարեց, որ սա նկատի կունենա:

Եվրոպական երկրներում և ամերիկյան մայր ցամաքում վաղուց դադարեցրել են ծխախոտային գովազդը: Եվրոպայում, սակայն, ամեն օր շարունակում է 1000 մարդ մեռնել ծխախոտի հետևանքներից: Կանադան, որտեղ ծխախոտի շահույթները և վնասները հավասար ասելիքի փուլում են այժմ իր արտադրությունը սկսել Հայաստանում Grand Tobacco ֆիրմայի գործունեությամբ: Մինչդեռ մենք արտահանող երկրից վերածվել ենք ներմուծողի, նվազեցնելով և ուշացատեղերը, և դեղերի եկամուտները: Հայաստանում տարեկան գնվում է 110 մլն դոլարի ծխախոտ, մինչդեռ առողջապահության ասպարեզին դեղերի գները 25 մլն դրամ է տրամադրված: Մեծ Բրիտանիայում որ ծխախոտը համար 1 բենզին է համարվում, մահացությունը ծխախոտից կազմում է 14 տոկոս: Հայաստանում այս թիվը 16 է: Սա 1995 թ. տվյալների համաձայն: Սակայն եղել են տարիներ, որ այդ թիվը հասել է 26 տոկոսի: Այսօր մեզ մոտ ծխողների թիվը աճել է երիտասարդների, հատկապես դեռահաս աղջիկների շրջանում: Երևանի հակահամաճարակային կենտրոնի հետազոտությունների համաձայն, ներկայումս 8-10-դ դասարաններում ծխում է տղաների 56, աղջիկների 27 տոկոսը: Եթե հաշվի առնենք, որ անոչտությունը կամ ոչտի մահացությունը չծխողների մոտ 4 տոկոս է, ծխողների մոտ՝ 28 տոկոս, ուրվագծվում է վերարտադրության խնդիրների միանգամայն ցավալի պատկեր: Այս թվերին դժվար է թեթև հայացք նետել: Նույնիսկ ամենահամոզված ծխողներ ցավով են արձանագրում և անհանդուրժելի համարում դպրոցահասակ երեխաների ծխախոտի օգտագործումը: Իսկ չէ՞ որ նրանք պարզապես ընդօրինակում են:

Տարօրինակ է, սակայն, հասարակության մեջ սա չեն գիտակցում, ինչպես նաև-գոյություն ունեն արմատացած տեսակետներ, որ ծխելը նպաստում է մարտողությանը, նիհարեցնում է, հմայք է հաղորդում, հանգստացնում է ջղերը: UMCOR կազմակերպության դպրոցներում անցկացրած «Պայքար ծխելու դեմ» դասընթացներից հետո ուսուցիչների 43-տոկոսը այդպիսի դրա տարվանները էին տվել: Առանց հետ բոլոր ջանքերն ապարդյուն են թվում:

Հանդիպումի արդյունքում կազմվեց «Ոչ ծխախոտին» կոմիտե, որի սկզբունքային խնդիրների շարքում դասվեց հարցը պետական մտահոգության առարկա դարձնելը, օրենսդրական հիմք ձևավորելը: Շրջագրվում է նաև ֆիլմ պատրաստել «Երևան» ստուդիայի հետ:

ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

Վերահսկիչ պալատը...

Սկիզբը էջ 1

Այս հարցին Բ. Արարքցյանի ասելով, որեւէ մեկը բացատրություն չի տվել: Այդ Միությունը ֆիչ բանով է տարբերվում ԱՊՀ-ից, թեեւ ԱՊՀ-ում էլ գործընթացները դանդաղ են ընթանում: Բացի այդ, ըստ ԱԺ նախագահի հայ-ռուսական հարաբերությունները գտնվում են «զգաքնակեցային վիճակում»: Եվս 2 հանգամանք, ըստ Բ. Արարքցյանի, անիմաստ են դարձնում նման հանրաքվեի անցկացումը: Նախ մեր օրենսդրությունը Սահմանադրությունը չի նախատեսում նման բան, որը կարող է լինել ընդամենը հասարակական կարծիքի հարցում: Նրա ասելով, ոչ ոք չի կարող նախագահին պարտադրել, որ պայմանագիր ստորագրի: Միայն, եթե օրենսդրական նախաձեռնություն լինի, ԱԺ-ն կարող է քննարկել:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ԱԺ նախագահի հրաժարականի առթիվ Բաբկեն Արարքցյանը որեւէ մանրամասն չհայտնեց, բայց նրա կարծիքով, քանի որ Արքուր Թովմասյանը նախագահական ընտրությունների ժամանակ թեկնածու էր եւ ֆիչ ձայն է ստացել, արդա նկատի ունենալով, որ այդ պաշտոնում աշխատելը կապված է վստահության քվեի հետ, հրաժարական է տվել:

«Չնայած ես ինքս մեկը մյուսի հետ չէի կապի», ասաց Արարքցյանը:

Ա. Հ.

«Տնտեսական համաներում». Ի՞նչ է դա

Մեզանում ֆիչ չի գրվել կապիտալի նախնական կուտակման «գիշատիչ» փուլի, համընդհանուր ալան-թալանի, ազգային հարստությունների արտահոսքի եւ, վերջապես, սեփականության տնտեսության մասին: Թե այդ առթիվ հնչած մեղադրանքների որ մասն է ճիշտ եւ որը՝ սխալ, կարծում եմ, ոչ ոք չի կարող հստակ ասել: Ո՞վ է հաշվել, օրինակ, թե կապիտալի ինչ քանակություն եւ ինչ գարշուղի ճանապարհներով է գնացել «դուրս»՝ հանգրվանելու այս կամ այն երկրի այս կամ այն բանկային հաշվեհամարում, այն էլ լոկ Աստված գիտե՝ ո՞ւմ անվամբ: Բայց որ այդպիսի երեւույթ կա, հավանաբար, ոչ ոք չի կասկածում, նույնիսկ՝ հանրապետության բոլոր մակարդակների իշխանությունները, նաեւ՝ իրավապահ մարմինները, որ առաջին հերթին պիտի կանխեին կապիտալի արտահոսքը: Այդ կապիտալը, անկախ նրանից՝ թալանվա՞ծ է, անազնիվ ճանապարհո՞վ է ձեռք բերվել, թե՞ նորօրյա հաջողակ-բիզնեսի արդյունք է, երկրում մնալու դեպքում շրջանառություն կատարելով՝ ի վերջո կծառայեր մեզ, մե՛ր երկրին, ծերուկ Մարքսի քաղաքատնտեսական լեզվով ասած՝ կառաջացներ «հավելյալ արժեք» թե՛ իր ազնիվ կամ անազնիվ տիրոջ, թե՛ մնացածներիս համար: Որովհետեւ կապիտալի ցանկացած շրջապտույտը զուտ վերացական հասկացություն չէ, այդ շրջապտույտն իրականացնելու համար աշխատատեղեր են ստեղծվում, միանգամայն կոնկրետ մարդիկ են ներգրավվում, մի խոսքով՝ առեւտրային կամ արտադրատնտեսական գործընթաց է ծավալվում: Ի վերջո, հենց այդ նպատակով է մեր երկիրն արդեն շուրջ 660 միլիոն դոլարի վարկ (կարդա՝ պարտք) վերցրել Միջազգային արժութային հիմնադրամից, Համաշխարհային բանկից, այլ միջազգային ֆինանսական կազմակերպություններից, պետություններից: Եթե ենթադրենք, որ նույն չափով կապիտալ է արտահոսել հանրապետությունից (իսկ ոմանք շատ ավելի ֆանտաստիկ թվեր են մատնանշում), ապա ցավով պիտի նկատենք, որ երկրում դրա մնալու դեպքում մենք կարող էինք խուսափել յուրաքանչյուր բնակչի հաշվով, ներառյալ նորածինները, մոտ 200 դոլարի պարտքից: Ինչ վերաբերում է սեփականաշնորհմանը, ապա որոշ փորձագետներ դրա ծավալը հաշվում են 52 տոկոս, ուրիշները այդ թիվը բարձրացնում-հասցնում են... 80 տոկոսի, իսկ դա նշանակում է, որ երկրի ներսում, առանց պետական գանձարանին որեւէ լումա վճարելու, տարեկան պտտվում է եւս 150-250 միլիոն դոլարի կապիտալ:

Ինչպե՞ս անել, որ այդ ահռելի հարստությունը... վերադառնա երկիր, ծառայի երկրին, իսկ սեփականաշնորհումը դադարի «սեփականաշնորհում» լինելուց եւ օգուտ բերի պետական գանձարանին: Այս «ինչպես»-ի պատասխանը գտնելն անչափ դժվար է, գրեթե անհնար: Նախ, որովհետեւ չգիտես՝ ով ինչքան է «դուրս» տարել, երկրորդ՝ «սեփականաշնորհում», ավելի կամ պակաս չափով, աշխարհի բոլոր երկրներում էլ կա, եւ դրա հայտնաբերումը մեծ դժվարությունների հետ է կապված՝ կաշառում են բոլոր նրանց, ովքեր պետք է հայտնաբերեն «սեփականաշնորհման գործարքներին», իսկ այսօրվա սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակում կաշառք վերցնելու գայթակղությանը դիմանալու համար պետք է առնվազն սուրբ լինել...

Այնուամենայնիվ, ռուսները կարծես թե ինչ-որ ելք են գտել: Պետական դումայի մի շարք խորհրդարանական խմբակցությունների ներկայացուցիչներ, որոնք ցանկացել են անհայտ մնալ, հրապարակ են նետել «տնտեսական համաներում» (ամնիստիա) հայտարարելու գաղափարը, որը վերջին շրջանում աշխուժորեն քննարկվում է մոսկովյան զանգվածային լրատվության միջոցներում: Անցած նախագահ Բորիս Ելցինը սեպտեմբերի 4-ին հեռուստատեսային մի տեսաերիզով հայտարարեց, թե դա ուշագրավ գաղափար է: Պետությունը «տնտեսական համաներում» է հայտարարում, երաշխավորելով, որ բոլոր նրանք, ովքեր իրենց կապիտալները կվերադարձնեն երկիր կամ կբացահայտեն «սեփականաշնորհման» միջոցները, ազատորեն իրավունք կունենան տնօրինել դրանք՝ չվախենալով որեւէ քրեական հետաքննությունից կամ հետապնդումից: «Մի 10, գուցե 15 տոկոս կբռնագանձենք հօգուտ պետության, բարեհոգաբար նշում էր Ելցինը, իսկ մնացածն իրենցն է, թող տնօրինեն»: Նրա կարծիքով, «տնտեսական համաներման» ակտը միանգամայն գործողություն պետք է լինի, այսինքն՝ կապիտալի տեր դարձած անձինք պիտի կարողանան օրինականացնել ձեռք բերածը եւ հանգիստ խղճով անցնել քաղաքակիրթ տնտեսավարման: Ելցինը գտնում էր, թե այդպիսի համաներում հայտարարելու դեպքում «երկիր կվերադառնան հարյուրավոր միլիարդ դոլարներ»:

Ի՞նչ կստացվի դրանից՝ դժվար է ասել: Եվ արժե՞, արդյոք, հետեւել այդ օրինակին: Խորհելու բան է:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑ

Կաթողիկոսը վերադարձավ Հարավային Ռուսաստանից

ԵՐԵՎԱՆ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ- Սեպտեմբերի 5-ին ավարտվեց Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինի պաշտոնական այցը Կրասնոդարի երկրամաս: Նախօրյակին, ի պատիվ կաթողիկոսի հանդիսավոր բանկետի ժամանակ երեք մեկենասներ Սբ. Գրիգոր Լուսավորչի շքանշանով պարգևատրվեցին: Նրանց միջոցներով եկեղեցիներ են կառուցվել Կրասնոդար քաղաքում (Նաիրի Հովհաննիսյան), Տուապսեի շրջանի Շահումյան ավանում (Նիկոլայ Քոչյան) եւ Կուրգանինսկ քաղաքում (Լեւ Ծատուրյան):

Ինչպես հաղորդում է երկրամասի հայկական «Երկրամաս» թերթը, կաթողիկոսն այցելել է Ռուս ուղղափառ եկեղեցու եկատերինոդարի եւ Նովոռոսիյսկի թեմի Սբ. Եկատերինայի Մայր տաճար: Այստեղ նրան հոգեւոր երգերով դիմավորեց ռուս հոգեւորականությունը: Այդ օրը Կուբանի պատմության մեջ առաջին անգամ ռուսական տաճարի կամարների ներքո հնչեց հայկական շարական կաթողիկոսի եւ նրան ուղեկցող հայ հոգեւորականների կատարմամբ:

Հաջորդ ընդունելությունը կայացավ համակուբանական կազակական զորքի շտաբում, որտեղ կաթողիկոսին դիմավորեց կազակների շարքը՝ զորքի աստանի տեղակալ, շտաբի պետ, գնդապետ Յուրի Գավրիլենկոյի գլխավորությամբ: Հանդիպմանը շատ բան ասվեց առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կազակների եւ հայերի փոխհարաբերությունների եւ երկրամասի ներկայիս իրավիճակի վերաբերյալ: Ինչպես նշեց կաթողիկոսը, այն բացասական պահերը, որ հանդիպում են հայերի եւ կազակների փոխհարաբերություններում, ծախսող օրերի պես «կուգան ու կերթան», իսկ եղբայրությունը կմնա ի սարսափ մեր ժողովուրդների թշնամիների:

Կաթողիկոսի այցի վերջում կայացել է ընդունելություն Գրասնոդարի երկրամասի վարչակազմում:

Ժամը 14.30-ին կաթողիկոսի ինքնաթիռը Կրասնոդարի օդանավակայանից օդ բարձրացավ դեպի Հայաստան:

Գրանցվեցին լրատվության նոր միջոցներ

ԵՐԵՎԱՆ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ- ՀՀ արդարադատության նախարարության 1997 թ. սեպտեմբերի 5-ի կոլեգիայի նիստում քննարկվեցին եւ պետական գրանցում ստացան «Աստ», «Եռանկյուն» հեռուստահեռարձակումները, «Հայկական ռադիո» ռադիոխմբագրությունը, «Պարտուն» ամսաթերթը, «Ին զինտո» հանդեսը, ինչպես նաեւ Կորբոլի ֆեդերացիա, Վանաձոր քաղաքի հնաբնակների «Վանաձոր» հայրենակցական միություն, «Նոր դարի ռավուլիֆ», «Ակոս», Ուսանողների օգնության հիմնադրամ հասարակական կազմակերպությունները:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հասցե՝ Հարությունյան 47
Գլխավոր եւ հրատարակչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հարությունյան 47
Թելեֆոն 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍՍՐԳԻՍ ՍՍՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Harrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՄԵՐԻԱԿ

Քաղաքական դիլետանտիզմով եւ տարրական մտքի սփոփական հակասություններով ներծծված ասուլիսից զարհուրելի էր փչում: Անմոռոգ ցինիզմը խախտելով երեւակայելի բոլոր սահմանները, փորձում էր ցատկել դատուիսներից դուրս փողոցներում ստեղծելով էլ ավելի աղազգային միջավայր: Թելման Գդլյանը հռոմեացի կենտուրիոնի կեցվածք ընդունած, ամենաբող հաստատակամությամբ եւ առոգանության ընդգծված կիկերոնությամբ, փորձում էր նախանձել ազգի փրկությանը մարտավարության հետագա ուղղությունները: Նրան դակատում էին միայն դափնեղոսակ եւ ձեռքերը վեր մեկնած տիտակ ծերակույտ: Աղասի Արզակյանը ներքին կարգով, գիտակցելով դատրիկների դասին չհարելու անհերքելի հանգամանքը, ըստ երեւույթին նախընտրում էր առաջնորդվել «սագերը կփրկեն Հռոմը» կարգախոսով: Հոնորներից երրորդը Ստեփան Ստեփանյանը, կոմունիստ էր, այլ կերպ ասած, հռոմեացի ղրոլեսար: Եվ ահա, նորաստեղծ այդ եռիբխանության ներկայացուցիչները, երեկ սեպտեմբերի 5-ին, խոսում ու խոսում էին ազգի եւ ղեսության միակ փրկության մասին:

Ձեռքերը մեկնած ես թվով 29-ը կանոնի ուղղությամբ, հայացքը առնում ներկա գտնվող դատավարժան հաղորդագիրներին: Թեկուզ Խորհրդավիշը արդեն Սոլոնի հայտնի ու անհայտ դեմոկրատիզմով հաստատում եւ հաստատում էր յուրաքանչյուր ժողովրդի կամքի արտահայտության նշանակությունը: Նա խանդավառված էր... կատակ չէ, եղբայր հավաքվել է ավելի քան մեկ միլիոն ստորագրություն (1 022 342): «Ես նախազգուշացնում էի իմ գործընկերներին ակնկալվող ծաղրուծանակի առանձին դրսեւորումների մասին: Ասում էի ոչինչ, բող նրանք մեկ ամիս ծաղրեն, երկու լավ, երեք, սակայն համոզված եղիք, որ համաղաստասխան հանկությամբ ստորագրություններ հավաքելու դեպքում, նրանք միանգամից կլռեն եւ հաշվի կնստեն մեզ հետ» (Թելման Գդլյան, «Երկխոսություններ», հատոր Ա): Սակայն ղատվարժան ծերակույտի երեսփոխանների գերակշիռ մեծամասնությունը ականջալուր չեղավ կենտուրիոնի խոսքին: անհասկանալի էր, թե ովքեր են «մենք», ովքեր են «նրանք» եւ ո՞վ է վերջ ի վերջո ինքը հոնորը:

Որոշ լռությունից հետո դայծառափայլ Աղասի Արզակյանը փորձեց խոսել դատկերավոր, ճարտասանության յուրատեսակ դրսեւորում Ռուսաստան-Բելառուս միությանը Հայաստանի անդամակցելու տարօրինակ ջատագովություն...

«Մենք այսօր գերադասում ենք լինել արջի հետ, բող մի ֆիչ հարբեցող ֆիչ անկանխատեսելի, բայց ոչ բոլոմտ»: Լռություն: Բայց չէ՞ որ վերջ ի վերջո բոլենին դիակեր է եւ նույնիսկ մեծ ցանկության դեպքում չի կարող լրջորեն անհանգստացնել շնչավոր արարածի: Բորենու գորդությունը Ամերիկայի հետ տվյալ դեպքում արդարացված չէ եւ բոլհանուր առմամբ Աղասի Արզակյանի խոսքը միտս չէ, որ բնութագրվում է դատճառա-հետեւանքային կապի առկայությամբ: Այս առումով փառք Սերգեյ Բաղալյանին, որն, ի դեղ, բացակա էր եւ առանձին հաշիվներ ունի Ռուսաստան-Բելառուս-Հայաստան հայկական նախաձեռնության հովանավորների հետ: Այս համատեքստում ֆիչ տարօրինակ էր թվում կոմունիստ դրոլեսար Ստեփան Ստեփանյանի խանդավառ ելույթը... «Հանրաղեսության բնակչության 90 տոկոսը կողմ է այդ միացմանը: Այս մասին է վկայում հավաքված ստորագրությունների քանակությունը»: Չափազանց հետաքրքիր թվաբանություն, առավել եւս այն դեպքում երբ Երեւանում ստորագրություններ ընդհանրապես չի հավաքվել: Երեւանում է աղրում հանրաղեսության բնակչության 30 տոկոսը: Այս առումով հատկանշական է կեսարի հավակնություններ ցուցաբերող Թելման Գդլյանի դիտողությունը. «Լավ է, որ ստորագրությունները բնակչության 100 տոկոսից չենք վերցրել: Թե չէ հնարավոր կլիներ դատկածել հայերի հանդգգային խնդրագրության մեջ...

Հարգարժան հոնորներ, չկարողացան դատասխանել եւ ոչ մի հարցի: Օրինակ, ի՞նչ կաղ ունի ձայների քանակը չէ՞ որ գրողը տանի, նույն ԱԴՀ-ում Ռուսաստան-Բելառուս միության ստեղծման օգտին քվեարկել է ընդամենը բնակչության 4 տոկոսը: Այնուամենայնիվ դատմանագիրն այսօր իրողություն է: Եվ ի՞նչ հետեւենք Թելման Գդլյանի դատասխանին. «Ձայների հաշվառումը հանախ աղճատ է. տվեք այդ հաշվառահներին փող եւ ձեր ասած 4 տոկոսը կդառնա 94»: Նշենք միայն, որ եռիբխանությունը յուրաքանչյուր ստորագրության դիմաց այդ նույն հաշվառահներին վճարում էր 10 սենք, ծախսելով ավելի քան 51 մլն դրամ:

ԱՐԻՍ ՂԱՋԻՆՅԱՆ

«ՄԻՈՒԹՅՈՒՆ»

Ինչպես են սագերը փրկում Հայաստանը

Ըստ Գդլյանի Հայաստանում 1 միլիոն խելագար

Մարդու իրավունքների գրադարանը «կալանքի» տակ

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ընկերակցության գրասենյակում օգոստոսի 20-ին տեղի ունեցած մամլո ասուլիսի, հետո Հայաստանի սահմանադրական իրավադատական կենտրոնին, Մարդու իրավունքների գրադարանի կազմակերդման համար»: Իսկ փոխտնօրեն Ֆ. Ջանջուղազյանը չէր կարող չիմանալ քաղաքի մանկական գրադարանների թիվը: Հայտնելով, թե իբր թիվ 3 գրադարանը Վանաձորի... միակ մանկական գրադարանն է, նա նոդատակ ունի դարզապես հասարակական կարծիքը տրամադրել ընդդեմ Մարդու իրավունքների գրադարանի, որին քաղաքի 15 մանկական գրադարաններից մեկի ընդամենը երկու սենյակն է հատկացված: Ընդ որում 3-րդ մանկական գրադարանի մնացած տարածքն էլ մոտ երեք անգամ մեծ է, քան Մարդու իրավունքների գրադարանի երկու սենյակները:

Ուշադրության անգամ չարժե Կենտրոնական գրադարանի տնօրենի՝ երկրադահներին տված ինչ-որ «գրավոր համաձայնությունը՝» «վիճելի» տարածքի վերաբերյալ: Տարածքը քաղաքդեսի որոշմամբ հատկացված է ՀՍԻԿ-ին: Քաղաքդեսարանի հետ կնքված է վարձակալական դայմանագիր, եւ նշված «գրավոր համաձայնությունը» որեւէ իրավական ուժ չունի այնդես, ինչդես իրավական ուժ չէր ունենա մեր գրավոր համաձայնությունը, ասենք... Սդայի տան բենքը երկրադահներին հատկացնելու մասին:

Աննախադեդ խայտառակություն է, որ որոշ մարդիկ, այդ թվում Աժ դատգամավոր Վիկտոր Դալլաքյանը, փորձում են արդարացնել երկրադահների կողմից Մարդու իրավունքների գրադարանի բռնագրավումը: Նրանք մոռանում են, որ մենք ապրում ենք դետության մեջ, որը սահմանադրություն եւ օրենսդրություն, դատական իշխանություն եւ իրավադահ մարմիններ ունի (ունի՞) եւ ոչ դ երկրադահներին ոստիկանությանը փոխարինելու մանդաս չի տվել:

Կրկնակի խայտառակություն է այն փաստը, որ Վանաձորի քաղաքդեսի եւ Լոռու մարզդեսի տեղական կարծիքով դետք է... մեր կազմակերդությանն այլ տարածք հատկացվի: Մեր գրադարանը բռնագրավածներին վտարելու փոխարեն, իշխանությունը սեփական է մեզ տարածք առաջարկել: Եվ անիշխանության ու անիրավության այս դասական դեդքում իշխանությունն ու օրինազանցները դաշնակից են, գործում են նույն ուղղությամբ. իշխանավորները մամլով խայտառակում են իրենց, իսկ օրինազանցները ադօրինի կալանքի տակ վերցնելով Մարդու իրավունքների գրադարանի գրքերը եւ փաստաթղթերը, հայտարարում են, որ մեզ թույլ չեն տալու ձեռք տալ մեր իսկ գույքին, մինչեւ չհրաժարվենք մեր օրինական տարածքից:

Այս փաստը շատ վտանգավոր է որոշես երեւույթ: Այս փոքրիկ միջադեդը ցույց է տալիս, որ իշխանությունը ընկրկում է ուժի դեմ եւ որ մեզանում արդեն սդառվում են օրենքները...

ԳԵՎՈՐԳ ՄՈՆՈՒԿՅԱՆ
Հայաստանի սահմանադրական իրավադատական կենտրոնի նախագահ

Բեռնար Լյուիսը կդառնա՞ Թել Ավիվի դատվավոր քաղաքացի

1997 թ. հուլիսի 14-ին Թել Ավիվի քաղաքային խորհուրդը մի շարք օտար եւ հրեական ծագում ունեցող ակադեմիկոսների Թել Ավիվի դատվո քաղաքացիություն շնորհելու որոշում է ընդունել:

Այս ակադեմիականների թվում էր նաեւ տիրահռչակ դրոֆեսոր Բեռնար Լյուիսը, որն իր հարուստ գրադարանը նվիրել էր Թել Ավիվի քաղաքդեսարանին:

Սույն որոշմանը հակադրվել են մի շարք հրեա ակադեմիկոսներ, մասնավորապես՝ անվանի դրոֆեսոր Մորդեխայ Վերբուվսկին եւ դատմաբան Եհուդա Բաուերը: Առաջինը դաշտոնավարում է քաղաքային խորհրդում, իսկ երկրորդը՝ երուսաղեմի «Եադ Վաշեմի» հրեական ողջակիզման բանգարանի փոխտնօրենն է: Բողոք է հայտնել նաեւ հայասեր դրոֆեսոր Յահիր Օրոնը, որը վերջին տարիներին փորձում է Հայկական հարցը ներառել Իսրայելի կրթական ծրագրերում:

Հակազդեցության այս ալիքին արձագանքել են Հայֆայի, Յաֆայի եւ երուսաղեմի Հայ դատի հանձնախմբերը: Տեղական որոշ բերքեր թեր ու դեմ կարծիքներ են հրադարակել որոշման վերաբերյալ, եւ Թել Ավիվի քաղաքային խորհուրդը ստիպված միայն Բեռնար Լյուիսի հարցով օգոստոսի 31-ին քաղխորհրդի բաց ժողով է գումարել: Այս նիստին ներկա են եղել Հայ դատի հանձնախումբը եւ իսրայելաբնակ բազմաթիվ հայեր: Ժողովի ընթացքում արտահայտվել են քաղխորհրդի չորս անդամներ, որոնցից հատկապես Արիե Չուգը խստորեն դատադարտել է հայկական ջարդերի անհերքելի փաստը ծածծել փորձողներին, այդ թվում՝ Բեռնար Լյուիսին:

Նա նշել է հետեւյալը. «Քաղաքացիության նման տիտղոս շնորհելու համար մենք դետք է ունենանք Թել Ավիվի բնակչության ջախջախիչ մեծամասնության հավանությունը: Այս դահին տիրող մթնոլորտից եզրակացնում եմ, որ տասնյակ հազարավոր քաղաքացիներ դիտի մերժեն այս շնորհը: Հետեւաբար առաջարկում եմ, որ այս հանդիսությունը հետաձգվի գեթ երեք ամսով, ու այդ ընթացքում կկատարենք մանրամասն քննություն դրոֆեսոր Լեւիսի վաստակի վերաբերյալ»:

Քաղխորհրդի արաբական ծագմամբ մեկ այլ անդամ շեշտել է, որ դետք է մեկ անգամ ունենալ Թել Ավիվի հայ բնակիչների զգացումները, որոնք իրենց լուրջ ներդրումն ունեն այս քաղաքի բարգավաճման գործում:

Քաղաքապետ Ռոնի Միլոն մասնակցել է, որ այդ որոշումն ինքնագլուխ չէ, առաջարկը ներկայացվել է Իսրայելի ականավոր ակադեմիկոսներ Ի. Ռաբինովիչի (ԱՄՆ-ում Իսրայելի նախկին դեսպան), դրոֆեսոր Շ. Շամիրի (Հորդանանում Իսրայելի նախկին դեսպան), դրոֆեսորներ Ց. Յակոբսի, Ա. Կոհենի, Ա. Օզի, Շ. Շավիթի եւ Ու. Լուբրանի կողմից: Քաղաքապետը նշել է նաեւ, որ ինքն անձամբ չի ճանաչում Լյուիսին, ծանոթ չէ նրա գիտական վաստակին, սակայն իր այդ քայլը իբրեւ խելացի արարք են գնահատել Իսրայելի նախկին վարչապետ Շ. Պերեսը, դաշտանության նախկին նախարար Մ. Արենսը եւ երուսաղեմի նախկին քաղաքապետ Թ. Կոլեքը:

Քաղաքապետը ցավ է հայտնել, որ հայ համայնքը իրեն վիրավորված է զգում: Նա ասել է, թե այսդիսի դատմական անցուդարձերի նկատմամբ դետք է իրատես եւ անաչառ լինել:

«Մեր որոշման բեկանումը անարդարություն կլինի Լյուիսի նկատմամբ, որն իբրեւ դատմաբան կատարել է դատմության արդարացի գնահատականը: Նա դարզապես բաղդատել է հրեական ողջակիզումը եւ հայկական ջարդերը՝ նշելով, որ առաջինը դետական նախաձեռնություն էր, մինչդեռ երեքնը տեղական վայրագություններ էին, որոնք որեւէ կամ չունեին բուրգական դետության հետ: Նա անհիմն է նկատել հայերի դնդումը բուրգական դետական վարչամեքենայի կողմից ջարդերի ծրագրված լինելու եւ գործադրելու վերաբերյալ», ասել է քաղաքապետը՝ իր հատատումները հիմնավորելով «Հաարեց» օրաթերթից արված մեջբերումներով:

Քաղաքապետ Միլոյի այս արտահայտությունները առաջացրել են ներկաների բուռն ցասումը, եւ մի քանի հրեաներ իրենց բացականչություններով ընդհատել են նրա ելույթը: Հայասեր ակադեմիկոս Ավի Անտմանը, որն այս նիստի առիթով դատրաստել էր հայանդաստ թռուցիկներ, բավականին սուր ոճով դատասխանել է քաղաքդետի այս «տհաս, միակողմանի ու անվայել» արտահայտությունները: Ավարտին քաղաքապետը խոստացել է հարցի քվեարկությունը հետաձգել քառասուն օրով՝ մինչ այդ կատարելով անհրաժեշտ քննություն եւ տեսակցելով հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Ժողովի ավարտին Հայ դատի հանձնախումբը հայ համայնքի զայրույթն արտահայտող նամակ-հուշագիր է հանձնել քաղաքապետին: Հայ դատի հանձնախումբը քաղխորհրդի ժողովի դահլիճից հեռացել է՝ հարցն ավելի բարձր ամբիոններ հասցնելու մտադրությամբ:

ԲՈԲՈՎ

Վճռաբեկ դանգատները կլսվեն սեպտեմբերի 10-ին

ԵՐԵՎԱՆ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Գերագույն դատարանի կոլեգիան վճռաբեկության կարգով սեպտեմբերի 5-ին դետք է քննության առներ սեպտեմբերյան դեդքերով դատապարտվածներից Արգիշտի Կիվիրյանի, Մկրտիչ Մեղավորյանի, Կիմ Բալայանի, Օնիկ Հունանյանի եւ Վահե Վարսանյանի դանգատները: Քննությունը, սակայն, մինչեւ սեպտեմբերի 10-ը հետաձգվեց նախագահող Մհեր Խաչատրյանի այլ գործում զբաղված լինելու դատճառով:

Հիշեցնենք, որ օգոստոսի 15-ին մեկ անգամ գործի լսումը հետաձգվել էր «Սեպտեմբեր-25/1»-ով բոլոր դատապարտվածների դանգատները միասին քննության առնելու համար: Լսվել էր միայն գործերից մեկով դատապարտված Սերոբ Մանուկյանի դանգատը, եւ դատավճիռը բողոքել էր անոնիմոսը:

ԱԶԳ

Գրախոսական

Արցախյան գոյամարտի ակունքները

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

Արցախը պատմական Հայաստանի այն նահանգներից է, որի հին ու նոր պատմության տարբեր կողմերին, դարավոր մաքառումներին շատ են անդրադարձել հնագույն ու նոր, հայրենի ու այլազգի բազմաթիվ հեղինակներ: Բայց նրանք լիովին չեն պարզաբանել Արցախի հարուստ ու բազմաշերտ, հաճախ նաեւ կնճռոտ պատմության բոլոր հարցերը, բոլոր անհայտները, չեն արծարծել նրա հինգհազարամյա ճանապարհի բոլոր ելեւէջները, անցքերն ու իրադարձությունները: Սակայն, ինչ խոսք, նրանք թողել են չափազանց հարուստ պատմագիտական ժառանգություն:

Արցախի պատմությունը, սերտորեն միահյուսված հայոց պատմությանը, առաջին անգամ ամբողջացրեց, հայ պատմագիտական համակարգի մեջ դրեց բազմաշնորհ գրող, պատմաբան, հասարակական-քաղաքական գործիչ, Արցախի զավակ Բագրատ Ուլուբաբյանը՝ արցախյան ազատագրական շարժման սկզբնավորողներից ու կազմակերպիչներից առաջնագույնը, ազգային գաղափարախոսության պայծառ դեմքերից մեկը: Եվ այդ ամբողջացումն ու համակարգումը, նորովի մեկնաբանություններն ու արծարծումները նա կատարեց 1960-ական թվականներից այս կողմ, մոտ 4 տասնամյակ: Այդ մասին են աներկբայորեն վկայում նրա «Գանձասար», «Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում», «Դվագներ Հայոց արեւելից կողմանց պատմության», «Զրուցարան» (Ա եւ Բ հատորներ), «Արցախյան գոյամարտը» (1918-1988 թ. փետրվար ժամանակաշրջանի ընդգրկմամբ), «Արցախի պատմությունը սկզբից մինչեւ մեր օրերը» կոթողային աշխատությունները, 1918-ի մայիսյան դյուցազնամարտի հերոսական դրվագների վառ նկարագրությամբ առլեցուն «Սարդարապատ» պատմավեպը, բազմաթիվ պատմահրապարակախոսական հոդվածները:

Սակայն բոլորը գիտնականի համառ որոնումների ու խորասուզումների արգասիք են՝ աղբյուրագիտական, փաստագրական հարուստ նյութերի հենքի վրա:

Դրանցում ոչ միայն ներկայացված է Արցախ աշխարհի դարավոր պատմության ամբողջական պատկերը, այլեւ փաստերի զորությամբ ու տրամաբանությամբ, մերկացված են թուրք-ազերի պատմագիտության կեղծիքներն ու աղավաղումները, այդ այսպես կոչված պատմագիտության անհող լինելը:

Բագրատ Ուլուբաբյանը շարունակում է վիպագրել Արցախի պատմության նորագույն հերոսամարտերը՝ դեպքերը հասցնելով ցայսօր: Դրա ցայտուն վկայությունն է գիտնականի նոր, ծավալուն գիրքը՝ «Արցախյան գոյապայքարի տարեգրություն» խորագրով: Դա աղբեցուցիչ նվիրումի ու մեղվակերպ աշխատասիրության առհավաստյա է, հայությանն ու գալիք դարերին ընծայաբերած մի խորախորհուրդ լուսամատյան՝ տագնապոտ ու սթափեցնող...

850 էջանոց, խիտ տողերով շարված այս տարեգրությունը, որ խմբագրել է պատմաբան Լ. Խուրշուդյանը, տպագրվել է ազգային երեւելի ծավալական, Կիլիկյան Աթոռի Ամենայի Արեւելյան շրջանի ու Կանադայի թեմի առաջնորդ Մեսրոպ արք. Աճեմյանի հոգածությամբ ու հովանավորությամբ:

Բ. Ուլուբաբյանի գրքում մանրամասնորեն ներկայացված է Արցախյան վեցամյա հերոսամարտի նոր շրջանը (1988 թ. փետրվարի 20-ից մինչեւ 1994 թ. կեսերը), մի շրջան, որը սկզբնավորվեց 1988-ի փետրվարի 20-ի աննախադեպ հուժկու պոռթկումով: Այն պնդումները, թե արցախյան գոյապայքարի 1988 փետրվարի 20-ի պոռթկումն անսպասելի երեւույթ է եղել, այն էլ հրահրված դրսից, հայ դաշնակցական կենտրոններից, պարզապես անհեթեթություններ են, բարբաջանքներ, մարդկանց խաբելու ու մոլորեցնելու փորձեր: Ո՞ւմ հայտնի չէ, որ տասնամյակներ շարունակ Կրեմլի գրասենյակներում եւ այլուր տեղյակ էին Լեռնային Ղարաբաղի բնակչության չդադարող բողոքագրերին, պայքարի տարաբնույթ դրսեւորումներին: Իսկ գորբաչովյան վերակառուցման փուչ ու դատարկ աղմուկներին հավատալով էլ քանի՞ պատվիրակություն էր գնացել... «իմաստուն» հայրերին ներկայացրել մարզի հայության ողբալի վիճակը, Ադրբեջանի հայահալած քաղաքականությունը, ազատագրության ու մայր ժողովրդի հետ վերամիավորվելու վերաբերյալ 70-ամյա հասատուն վճիռը: Լիովին իրավացի է հեղինակը, երբ այս մասին գրում է. «Ուրեմն, 88-ի փետրվարն սկսվել է 1918 թ. մայիսից, երբ Անդրկովկասի արեւելյան մասում ստեղծվեց մինչ այդ երբեք գոյություն չունեցած Ադրբեջան, եւ սա էլ իր նպատակը դարձրեց տիրանալ Արցախ-Ղարաբաղ հայկական մարզին: Արցախը ոտքի ելավ, նետվեց գոյապայքարի, որը շարունակվեց տասնամյակներ, մինչեւ 1988-ի փետրվարը: Այս կետում արդեն այն պայթեց իբրեւ համազգային վճռի, հանուր հայության ընդվզումի աննախադեպ ու արդար պոռթկում, որը չէր կարող չպսակվել հաղթանակով» (էջ 9):

Եվ իրավ, 1988-ի փետրվարի 20-ի ընդվզումը դարձավ այն համազգային հնոցը, որ արդար պայքարի լիցքերով պարուրեց հարյուր հազարավոր հայորդիների՝ փոքրերից մինչեւ ծերերը: Հասարակության գրեթե բոլոր շերտերը ե՛ւ Արցախում, ե՛ւ մայր Հայաստանում, ե՛ւ սփյուռքում ոտքի ելան՝ հանուն Արցախի փրկության ու ազատագրության, հանուն ժողովրդավարության: Այսօրվա ոչ մեծ հեռավորությունից նոր-նոր են ուրվագծվում այդ շարժման թափն ու ուժգնությունը համահայկական կյանքի դարավոր ճանապարհին: Համազգային շարժման գլուխ անցան ազգային մտավորականության հանրահայտ դեմքերը (Զորի Բալայան, Սիլվա Կապուտիկյան, Վաչե Սարուխանյան, Իգոր Սուրադյան եւ այլք): Սակայն շուտով, ավա՜ղ, արցախյան շարժման ալիքների վրայով իշխանությունն իրենց ձեռքը վերցնելու տենդով բռնված, չարաշահելով փողոցներ ու հրապարակներ ելած զանգվածների բնաբուխ զգացումները, «Հայաստանի համբավավոր մտավորականությանը, մտավորականներին գոռեհկորեն ետին պլան քշեցին... իսկ գործն իրենց ձեռքն էին վերցրել եռանդուն ու անամոթաբար հանդուգն ուժեր» (էջ 31): Այս եւ այլ մանրամասներ հետագա դեպքերի ու իրադարձությունների շարադրման հյուսվածքում համարձակ ու անվրեպ բնութագրված են եւ հանձնված պատմության ու ժամանակի դատաստանին:

Ոչինչ չի վրիպել քաջատեղյակ տարեգրի ու հմուտ վերլուծաբանի տեսադաշտից: Շրջանառության մեջ դնելով մամուլի (հայկական, ռուսական, ադրբեջանական, այլազգի) հրապարակումները, տեղական, ադրբեջանական, միութենական, միջազգային ռադիոհեռուստատեսային հաղորդումները, պաշտոնական այցանների փաստաթղթերը, կուսակցական ու պետական որոշումներն ու հրամանագրերը, զանազան խմբավորումների ու անհատ անձանց կոչերն ու հայտարարությունները, հանրահավաքներում եւ ասուլիսներում հնչած ելույթները, բազմաթիվ ականատեսների զրույցներն ու տեղեկատվությունները եւ տարաբնույթ այլ նյութեր՝ Բ. Ուլուբաբյանը գրքում համակողմանիորեն ներկայացրել է Արցախյան ազգային-ազատագրական պայքարի մերօրյա ամբողջական պատմությունը՝ սերունդներին հանձնելով հրազենից շատ ավելի զորեղ մի զենք, ուսանելի ու կիրառելի բազում դասերի փոխկապակցված մի շղթա:

Փետրվարյան պայթյունից հետո Արցախում, Հայաստանի սահմանամերձ շրջաններում եւ այլուրեք դեպքերն ու իրադարձությունները գնալով նոր բնույթ ու որակ էին ստանում, եւ իրավիճակն ավելի ու ավելի էր արվում ու խորանում՝ գոյացնելով բազմակողմ եւ բազմաստիճան հակամարտությունների ու հակասությունների մի բարդ շղթա:

Խե՜ղճ Արցախ... որի՞ եւ ո՞ւմ դեմ պայքարեր՝ շղթայազերծ լինելու ու իր դարավոր բաղձանքը կատարելու համար. կենտրոնի անհամար դավեր, ենթագաղտնի ստորություններ՝ վստվեր Գորբաչովի գլխավորությամբ, «...Չէ՞ որ այդ ճիվաղի թելադրանքով են կատարվել հակաարցախյան բոլոր մեծ չարագործությունները վերջին 5 տարիների ընթացքում, գրում է Բ. Ուլուբաբյանը, եւ նրա դիվային ծրագրով էր, որ այսպես դժոխային ճանապարհի վերածվեց մեր ազատագրության ու անկախության երթը» (էջ 620): Նա չանսաց մեծահամբավ Ա. Սախարովին, երբ ասում էր, թե դարաբաղյան խնդիրը վերակառուցման փորձաքարն է: Ոչ միայն արհամարհեց, այլեւ միութենական ղեկավարության, հատկապես ձեռնածու Գորբաչովի համար Հայաստանը համարվեց առաջինը «ապտամբ հանրապետությունների» շարքում, «եւ նրան, Լեռնային Ղարաբաղի հետ վիճակվեց դառնություն ազատագրվեցին պատմական Արցախի բնակավայրերը՝ Լաչինը, Քելբաջարը, Աղդամը, Կուբաթլին, Ջեբրայիլը, Ֆիզուլին...

Հակիրճ հիշատակված այդ դեպքերն ու երեւույթները, անցքերն իրենց խորագնին արտացոլումն են գտել Բ. Ուլուբաբյանի գրքում՝ ստանալով արժանի բնութագրումներ ու գնահատումներ:

Աշխատության մեջ հանգամանորեն արտացոլված է այն միտքը, որ Արցախը վճռորոշ ու անվարան, հաղթահարելով կենտրոնի ու Բաքվի հարուցած արգելքներն ու դժվարությունները, ընթացել է ինքնորոշման իրավունքի կիրառման, ժողովրդավարության, սահմանադրական նորմերի պահպանման ճանապարհով: Դեռեւս 1991-ի սեպտեմբերի 2-ին, երբ հակամարտությունը շարունակում էր ավելի սուր բնույթ ստանալ, Արցախը Շահումյանի շրջանի հետ մեկտեղ ինքնորոշվեց եւ պատշաճ կարգուկանոնով հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ծնունդը՝ ի տրիտուր Ադրբեջանի ԳԽ-ի՝ ԼՂԻՄ-ի լուծարման վերաբերյալ ընդունված որոշման, որի իրավունքը բոլորովին չուներ, քանի որ մարզը տրոհվող ԽՍՀՄ-ի իրավաժառանգն էր, որպես նրա վարչաքաղաքական ինքնավար տարածքներից մեկը: Իսկ 1991-ի դեկտեմբերի 10-ի համաժողովրդավարական հանրաքվեով (98 տոկոսից ավելի ձայներով), պահպանելով միջազգային բոլոր չափանիշները, 100-ից ավելի օտարերկրյա դիտորդների մասնակցությամբ հաստատեց սեպտեմբերի 2-ի հայտնի հռչակագիրը: Եվ այժմ ԼՂՀ-ն օրինական պետություն է՝ դրան հատուկ բոլոր կառույցներով, համապատասխան տարբերիչ հատկանիշներով: Հայաստանի իշխանությունների կողմից ԼՂՀ-ի չճանաչումը կոպիտ սխալ է, որի դեմ արդարացի դժգոհությունները ցայսօր շարունակվում են:

1989 թ. դեկտեմբերի 1-ը Արցախյան շարժման ամենաճակատագրական հանգույցներից մեկը դարձավ, դժբախտաբար բացառիկորեն ծախողակ հանգույցներից: ՀԽՍՀ-ի Գերագույն խորհուրդը ընդունեց Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի վերամիավորման մասին մեռելածին որոշումը, որով, ինչպես դիպուկ բնութագրել է Բ. Ուլուբաբյանը, «թոզ են փչել ժողովրդի աչքին, լավատարդ դարձել իրականում փակուղի մղելով Արցախի հարցը, կատարել ճակատագրական մի քայլ, որն ինչման երեսպաշտական, նույնքան էլ կործանարար է եղել շարժման եւ հատկապես Արցախի փրկության համար» (էջ 127):

Վերը մատնանշված այս երկու խնդիրները խորությամբ քննարկված են աշխատության համապատասխան էջերում:

Գրքում բավական հաջողությամբ ու ակներեւ ճշմարտացիությամբ բացահայտված է Գեղարքունիքի ենթաշրջանի, Շահումյանի շրջանի հերոսական պայքարը, ի ցույց են դրված դրանց անկման պատճառներն ու հետեւանքները, Հայաստանի վարչախմբի, մասամբ նաեւ ԼՂՀ-ի առանձին ղեկավարների աններելի ու ազգավնաս գործելակերպը:

Վեցամյա ռազմական իրադարձությունների ու դեպքերի, քաղաքական, դիվանագիտական անցուդարձերի մանրազնին նկարագրությանը զուգընթաց՝ զգալի տեղ է տրված լրատվության միջոցների հրապարակումների քննությանը: Բացահայտված են Ադրբեջանի քարոզչական մեքենայի ամբողջ կեղծիքներն ու հերյուրանքները, որոնք մի քանի լեզուներով տարածվում են աշխարհի բոլոր անկյուններում: Մեղադրանքի խոսքեր են ասված հայկական լրատվության միջոցների, հատկապես ռադիո-հեռուստատեսության հասցեին, որոնք էլ ըստ արժանվույն չեն կարողանում համակողմանիորեն ներկայացնել աշխարհին Արցախի արդարացի խնդիրը՝ իր բուն էության ու հատկանիշների ամբողջ միագումարով. քանի որ ցայժմ էլ չի ստեղծվում մի համակարգող կենտրոն, որ ի մի բերի ողջ անելիքը, մեր գաղափարական զինանոցի բոլոր փաստերն ու իրողությունները: Իսկ լրատվության մարտադաշտում պայքարը դեռ շարունակվում է, եւ մեր լրատվությունը բազմալեզու հրապարակումներով պիտի կարողանա չեզոքացնել Ադրբեջանի քարոզչական հզոր մեքենայի սուտն ու կեղծիքը եւ համաշխարհային հանրությանը հասցնել Արցախի խնդրի մարդասիրական էությունն ու արդարացիությունը: Այս գործում մեծ է հատկապես ռադիո-հեռուստատեսության դերը:

Աշխատությունը դրական ու բացասական իրական կերպարների մի պատկերասրահ է՝ ներկայացված բարդ հարաբերությունների ու հանգույցների խաչմերուկում, արցախյան գոյապայքարի ճանապարհին: Դրանցից յուրաքանչյուրը իր արարքներով ու կեցվածքով կերտավորված է, անաչառ բնութագրված: Պարզորոշ երեւում է, թե ո՛վ ով է: Ըստ հարկի ներկայացվում ու բնութագրվում են հասարակական-քաղաքական կազմակերպությունները, ամենատարբեր հոսանքներն ու միությունները, միջազգային ատյանները, մեծ ու փոքր պետությունները՝ իրենց ղեկավարներով, տարբեր դիրքեր զբաղեցնող մարդկանցով, Արցախի հիմնախնդրի ու գոյապայքարի նկատմամբ նրանց ունեցած ճիշտ ու սխալ պատկերացումներով ու գործելակերպով: Նպատակահարմար է, որ ընթերցողն ինքը ճանաչի այդ մարդկանց:

Բ. Ուլուբաբյանի գրքում բնորոշված են հայ ժողովրդի իսկական բարեկամները, հայատեր այլազգիները, որոնք իրենց մեծ նպաստն են բերել եւ կենդանի մնացածները շարունակում են այսօր էլ բերել արցախյան գոյապայքարին: Դրանք են՝ հանրահռչակ գիտնական Ալեքսեյ Սախարովը, բանաստեղծ Ռասուլ Համզաթովը, ռուս գրող, հասարակական գործիչ Ինեսա Բուրկովան, հայտնի գրող, քաղաքագետ, հրապարակախոս Անդրեյ Նույկինը, ռուս մտավորական Կիրիլ Աբեսեեւսկին, Վալենտին Օսկոցկին, Սանկտ Պետերբուրգի հեռուստատեսության Ավետյանա Կուլչիցկայան, «Մեգապոլիս-Էքսպրես» թերթի ֆոտոթղթակից Անդրեյ Ֆյոդորովը, լիտվացի հանրածանոթ լրագրողուհի Մարիետ Կոնտրիմայտեն, դիվանագետ, պատմաբան Վլադիմիր Ստուդինը, մեր ազգի հրեշտակ բարոնուհի Քոկսը, բուլղար հայտնի լրագրողուհի ու կինոռեժիսոր Ցվետանա Պասկալեւան, քաղաքագետ Վիտալի Դանիլովը եւ ուրիշներ:

Աշխատությունը փայլում է հայերենի բառուբանով, լեզվի ու ոճի ինքնատիպության շողարձակումներով: Գրքում դրսեւորվում են հեղինակի համակողմանի գիտելիքները, իմացական ինքնատիպությունը, փաստական նյութը ճնշելու եւ ընդհանրացնելու փայլուն տաղանդը, եզրահանգումների համոզչությունը: Այս եւ այլ հատկանիշների շնորհիվ աշխատությունը մի հանրագիտարան է, մնայուն արժեք հայոց պատմության գանձարանում:

Ավելացնենք նաեւ, որ Բ. Ուլուբաբյանը գրի է առել վերջին երկուսուկես տարվա (հրադադարից այսկողմ) դեպքերն ու երեւույթները, սակայն ինչ-ինչ պատճառներով չի մտցրել գրքի մեջ: Գիրքը լիովին չի պարունակում արցախյան զինական ուժի կենսագրությունը:

Հեղինակը այս ամենը պահել է հաջորդ գրքին, որ կամբողջացնի, կավարտի, կհանձնի ընթերցողի դատին, քանզի, ինչպես ինքն է ասում, աշխարհի քաղաքական մթնոլորտը, մեծ ու փոքր տերությունների դիվանագիտական խաղերը մեր առաջ բացել են մի մեծ ճշմարտություն, մեր հողի ու նրա տիրոջ անվտանգությունը միայն ու միայն այդ զինվորությունն է պաշտպանելու, մեր լեռնաստանում ծնված, նրա պատիվն ու անկախությունը իր կյանքից բարձր դասող զինվորությունը:

Արցախի խնդրի դեմ ու կողմ քարոզչության ներկա բուռն շրջանում հույժ կարեւոր է, որ Բ. Ուլուբաբյանի գիրքը գոնե թարգմանվի ռուսերեն եւ անգլերեն, որպեսզի միջազգային հանրությունը չունի նմանօրինակ հարուստ ու համահավաք աղբյուր ճշմարտության գոց դռները բացելու համար:

ՌՈՒԶԱ ԴԱՎԼԱԲՅԱՆ

ԱԶԳ

Միջազգային

Թուրքիան եւ իր «ադերախտ հարեւանները»

Հայտնի թուրք լրագրող Էրգուն Բալջըոնը «Հյուրրիյեթի» հուլիսի 26-ի համարում, Հայաստանին, Իրանին, արաբական երկրներին ու Հունաստանին վերագրելով այսպես կոչված հակաթուրքական գործունեություն, ինչը, նրա կարծիքով, մեծապես խրախուսվում է Ռուսաստանից կողմից, իր պարտքն էր համարում կասարել հետեւյալ ուշագրավ դիտարկումը. «Ասծո կամքով, թե բախտի քմահաճույքով, Թուրքիային բաժին են հասել ադերախտ հարեւաններ»: Այնուհետեւ նա շարունակում էր. «Թուրքիային ամբաստանի մեջ առնելու նկրտումները կարելի՞ է արդյոք բացատրել սոսկ հարեւանների ադերախտությամբ: Ո՛չ: Սխալներ է գործում նաեւ Թուրքիան»: Նրա կարծիքով, Անկարան ուղղակի թե անուղղակի աջակցելով Չեչնիային, իր վրա է գրավել Մոսկվայի զայրույթը: Իսկ վերջինս որպես հակազդեցության միջոց սկսել է Թուրքիայի դեմ օգտագործել PKK-ի խաղաթղթը, բացելով իր գիրկն այդ կազմակերպության առջեւ:

Թուրքիան աշխարհիկ ժողովրդավարական պետություն է: Էրգունը գտնում է, որ դա միանգամայն անհանդուրժելի է Իրանի իսլամական վարչակարգի համար եւ ավելացնում. «Չպետք է սակայն մոռանալ, որ շահի կողմնակիցները Անկարայի թողտվությամբ ադաստանել էին Թուրքիայում եւ տարիներ շարունակ գործեցին Թեհրանի իսլամական վարչակարգի դեմ: Ի պատասխան դրան Թեհրանն էլ աղաստան տվեց PKK-ին»:

Էրգուն Բալջըոն ուշագրավ դիտարկումներ է անում նաեւ թուրք-իսրայելական ռազմական համագործակցության շուրջ, թերեւս դա համարելով տարածաշրջանում Թուրքիայի մեկուսացման գլխավոր պատճառը. «Համագործակցությունը, գրում է նա, արաբների տարակուսանքն էր առաջացրել. Իսկ արեւելյան միջերկրականում Թուրքիա-ԱՄՆ-Իսրայել համատեղ զորավարժություններ անցկացնելու մասին որոշումը, որ ընդունվեց Նաթանյահուի կառավարության ու պաղեստինցիների փոխհարաբերությունների աննախադեպ սրման պայմաններում, երբ արաբ-իսրայելական խաղաղ կարգավորման գործընթացը հայտնվել էր հոգեվարքի մեջ, կրակի վրա յուղ լցրեց»:

Հեղինակն ակնհայտորեն բացասական վերաբերմունք է ցուցաբերում վերոհիշյալ զորավարժություններին, իսկ արաբական աշխարհի երկրները, հատկապես Սիրիան, ոչ միայն դատապարտում են դրանք, այլեւ դիտարկում են որպես անվտանգության լուրջ սպառնալիք տարածաշրջանում: Հակառակ դրան, Անկարայում Իսրայելի դեսպանատան ներկայացուցիչ Նիսան Անդորը մարդասիրական բնույթ է հաղորդում զորավարժություններին: Իսկ Պենտագոնը, թուրքական հեռուստատեսության սեպտեմբերի 3-ի հաղորդման համաձայն, գալիս է համապատասխան հայտարարությամբ ընդգծելու զորավարժությունների մարդասիրական պարագան: Այդ նույն տրամաբանությամբ, պատերազմները նույնպես կարելի է բնութագրել որպես մարդասիրության դրսեւորում, հատկապես այն դեպքում, երբ դրանք սանձազերծվում են ԱՄՆ-ի կողմից, իսկ Իսրայելը անմիջական մասնակցություն է ցուցաբերում: Ինչ վերաբերում է Սիրիային, ապա նա հավանաբար ավելի քան ադերախտ է, քանի որ ԱՄՆ-Թուրքիա-Իսրայել համատեղ զորավարժությունների համատեղ զորավարժությունները արհամարհելու գնով առաջին պլան է մղում սպառնալիքի, եւ խորը մտահոգություն է հայտնում սեփական անվտանգության մասին:

Կարեւորը սակայն զորավարժությունների կամ պատերազմների «մարդասիրական» բնույթը հաղորդելու տրամաբանությունը չէ, այլ տարածաշրջանում Թուրքիայի գլխին կախված մեկուսացման վտանգը: Համատեղ զորավարժությունները պարզապես խորացնում են այն: Արդյունքում սրվում են Անկարայի փոխհարաբերությունները տարածաշրջանի երկրների հետ: Այդ առումով թուրք լրագրողն իրավացի է: Փոխարենը, սակայն, ամրապնդվում է Թուրքիա-Իսրայել համագործակցությունը եւ՝ աճում է որպես ռազմական դաշնակցի Թուրքիայի նշանակությունը ԱՄՆ-ի քաղաքական ծրագրերում: Սա կարեւոր հանգամանք է, որ ոչ միայն դիվանագիտական նախաձեռնությունների հնարավորություն է տալիս թուրքերին, այլեւ պայմանավորում դրանց հաջողությունը:

Վերջին շրջանում թուրքական դիվանագիտությունը բուռն գործունեություն է ծավալում: Ակտիվանում են Եվրամիություն-Թուրքիա փոխհարաբերությունները, կշեռքի նժարը Կիպրոսի հարցում հետզհետե թեքվում է թուրքերի կողմը: Երբ Իտալիայի արտգործնախարարությունը Դինին պնդում է, որպես կանխավճիռ, այսպես կոչված «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» անունը, ԱՄՆ-ի պետքարտուղարության խոսնակ Ջեյմս Ռուդինը խրախուսում է նրա արարքը: Իսկ Վաշինգտոնը սեպտեմբերի 3-ի հայտարարությամբ հերքական անգամ Կիպրոսի Հանրապետության անդամակցությունը Եվրամիությանը պայմանավորում է Թուրքիայի անդամակցությամբ: Եվ վերջապես, արտգործնախարար Իսմայիլ Ջեմի հաջող բանակցությունները Փարիզում ֆրանսիացի գործընկերոջ հետ հունի մեջ են գցում ԵՄ-Թուրքիա փոխհարաբերությունները:

Ըստ երեւույթին Թուրքիայի տեսանկյունից ոչ պակաս հաջողությամբ է պսակվել Սուլեյման Դեմիրելի պաշտոնական այցը Հունգարիա: Սեպտեմբերի 4-ին վերջինս Բուդապեշից վերադարձավ Անկարա: Վերոհիշյալ երկու երկրների պատմական առնչություններն ու դրանց միջեւ հակասությունների բացակայությունը, ինչ խոսք, թուրք-հունգարական մերձեցման գրավականն էին: Դեմիրելը երկօրյա այցով եկավ ամրապնդելու դա: Հարցը, սակայն, սոսկ մերձեցման ամրապնդումով չի սահմանափակվում, այլ այդ այցի շնորհիվ ստեղծվում են թուրքական եւ հունգարական զինված ուժերի համագործակցության նախադրյալներ եւ Թուրքիան դատապարտվում է սեփական արտադրության F-16 մակնիշի ռազմական ինքնաթիռներ տրամադրել հունգարներին: Այլ կերպ ասած, ստեղծվում են թուրք-հունգարական ռազմական համագործակցության անհրաժեշտ նախադրյալներ:

Ինչպես հայտնի է, Թուրքիան այդ բնագավառում, բացի Իսրայելից, համագործակցության պայմանագրեր ուներ Ադրբեջանի եւ Վրաստանի հետ: 1997 թ. հուլիսի 29-ին Անկարայում համանման պայմանագիր ստորագրվեց նաեւ բուլղարների հետ: Ռազմական բնագավառում թուրք-հունգարական համագործակցության Անկարայի ձգտումները նպատակաուղղված են Բալկաններում Թուրքիայի դիրքերի ամրապնդմանը, ադահովելու համար ԱՄՆ-ի ռազմաքաղաքական ներկայության հարատեւությունը թերակղզում: Այս ամենի առումով պատահական չեն ռազմական բնագավառում Հունգարիայի հետ համագործակցության Թուրքիայի ձգտումները: Բոլորովին պատահական չեն Բուլղարիայի եւ Ռումինիայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին ադահովելու Թուրքիայի համապատասխան նախաձեռնություններ:

Թուրքիան Միջին Արեւելքում տարածաշրջանի երկրներին հակադրվելու գնով ծառայություններ է մատուցում ԱՄՆ-ին: Իսրայելի հետ գործարքները սրում են նրա փոխհարաբերությունները հարեւանների հետ եւ նա կանգնում է մեկուսացման սպառնալիքի առջեւ: Դա, թերեւս, կարելի է պայմանավորել ԱՄՆ-ի նկատմամբ Թուրքիայի դաշնակցային պարտավորություններով: Բայց չպետք է գերագնահատել դրա նշանակությունը: Ի վերջո, Թուրքիային մեկուսացնող երկրներն իրենք են մեկուսացված տարածաշրջանում: Դրանցից Սիրիան ու Իրանը ԱՄՆ-ի քմահաճույքով առաջնակարգ տեղ են զբաղեցնում այսպես կոչված «ահաբեկչությանն աջակցող» երկրների ցուցակում: Ինչ վերաբերում է Իրաքին, ապա թշնամաբար տրամադրված զորքերը նրան կանգնեցրել են մասնատման փաստի առջեւ: Թե ինչքանո՞վ կհաջողվի վերոհիշյալ երկրներին հասնել Թուրքիայի մեկուսացմանը, դժվար է ասել: Միանգամայն ակնհայտ է, սակայն, մեկուսացման սպառնալիքի գերագնահատումը թուրք լրագրողի կողմից: Սակայն դա նոր երեւույթ չէ: Հակառակ դրան բոլորովին նոր են Անդրկովկասում, Միջին Ասիայում եւ Բալկաններում նրա առջեւ բացվող հեռանկարները: Որպես երեւույթ նոր է նաեւ նրա ռազմական ներկայությունը Հյուսիսային Իրաքում, Բոսնիայում: Ավելի քան նոր են ռազմական համագործակցության պայմանագրերը, որ նա ստորագրել է տարբեր երկրների հետ: Թուրքիայի դիվանագիտական վերոհիշյալ նախաձեռնությունները հիմք են տալիս եզրադրելու, որ հեռանկարները Անկարային անհամեմատ հուսալուր են, քան մեկուսացման սպառնալիքը մտահոգում է նրան:

ՀԱՍՏՈՒԹ ՉԱԲԻՏՅԱՆ

ՀԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Օլեգ Կալուգինը ԱՄՆ բնակիչ

Ամերիկյան «Վաշինգտոն փոստ» օրաթերթի համաձայն, Ռուսաստանի ՊԱԿ-ի հայտնի աշխատակից Օլեգ Կալուգինը մշտական բնակության արտոնագիր ստանալու դիմում է կատարել ԱՄՆ-ի ներգաղթի հարցերով զբաղվող գերատեսչությանը: Հայտնվում է նաեւ, որ վերջինիս բարեկամը տեսել է, թե նա չի ցանկանում ամերիկյան քաղաքացի դառնալ: Ինչպես հայտնի է, գեներալ Կալուգինը 1994 թ. հեռանալով Ռուսաստանից դասավանդում է Վաշինգտոնի Կաթոլիկ համալսարանում եւ իր նախկին հետախուզական աշխատանքների մասին հրատարակել է գիրք:

«ԵՐԵՎԱՆ»

Իսրայելը մտահոգված է ներգաղթի նոր միտումներից

ԹԵԼ ԱՎԻՎ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ. ԱՐՏԵՆՊՐԵՍ. Իսրայելում մտահոգված են ԱՊՀ-ից կատարվող ներգաղթի վերջին տարիներին նկատվող նոր՝ բացասական միտումներից: Ինչպես հաղորդել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, առանձնապես տագնապ է պատճառում այն հանգամանքը, որ ներգաղթողների թվի նշանակալից ընդհանուր նվազման հետ մեկտեղ երկիր են ժամանում հետզհետե ավելի շատ ոչ հրեաներ եւ նախաթոշակային ու զառամյալ տարիքի մարդիկ: Այստեղ հրապարակված տվյալների համաձայն, անցյալ տարի ԱՊՀ-ից Իսրայել էր տեղափոխվել մոտ 59 հազար մարդ, որի մեկ երրորդը՝ ոչ հրեաներ, որոնց բաժինն էլ ավելի մեծ է երիտասարդության շրջանում:

Ռուսական ռազմական ինքնաթիռներ Ինդոնեզիային

Սեպտեմբերի 4-ին Ինդոնեզիայի իշխանությունները հայտնել են, որ Ռուսաստանի հետ ստորագրվել է շուրջ 500 մլն դոլարի համաձայնագիր, ըստ որի երկրի օդուժը կստանա SU-30K տիպի 12 ռազմական ինքնաթիռ եւ MI-17-IV տիպի ութ ռազմական ուղղաթիռ: Զինտեխնիկայի գինը Ինդոնեզիան կվճարի սուրճի, յուղերի, կտորեղենի եւ այլ ապրանքների արտահանման միջոցով:

«ԵՐԵՎԱՆ»

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱ

Ի՞նչ է կորցրել Չեռնոմիրդինը Վիլնյուսում

Սեպտեմբերի 5-ին Վիլնյուսում սկսվել է Եվրոպայի կայունության եւ անվտանգության հիմնախնդիրներին նվիրված միջազգային կոնֆերանսի աշխատանքը: Այն հրավիրվել է Լիտվայի ու Լեհաստանի նախագահներ Ալգիրդաս Բրազաուսկասի եւ Այզեսանդր Կվասնեւսկու նախաձեռնությամբ. մասնակցում են նաեւ Լատվիայի, Էստոնիայի, Ֆինլանդիայի, Բելառուսի, Ուկրաինայի, Մոլդովայի, Հունգարիայի, Բուլգարիայի, Ռումինիայի ու Ռուսաստանի պետությունների կամ կառավարությունների ղեկավարները: Վիլնյուս մեկնելուց առաջ Ռուսաստանի վարչապետ Չեռնոմիրդինը ասել էր, թե «ճիշտ ժամանակին եւ խիստ կարեւոր է համարում այդպիսի հանդիպման անցկացումը»: Նա մտադիր է կոնֆերանսի առիթն օգտագործելով բանակցություններ վարել մերձբալթյան երեք երկրների խորհրդարանների եւ վարչապետների հետ:

ՌԱՖԱԼ ՍԱՖԱՐՅԱՆ

Բրազաուսկասը, Լենարտ Մերին եւ Գոլտաս Ոլմանիսը շահագրգռված են Չեռնոմիրդինի հետ խոսակցություն վարել Լատվիայի, Լիտվայի եւ Էստոնիայի հետ Ռուսաստանի սահմանները որոշարկող պայմանագրի ստորագրման անհրաժեշտության մասին, որն ահա 6 տարի ձգձգվում է: Իսկ դա նշանակում է, որ Ռուսաստանը պայմանագրային պարտավորություն չի ստանձնել ճանաչելու այս երկրների հետ իր սահմանային գիծը, եւ նրանք անհանգստանում են, թե հյուսիսի հարեւանը կարող է ոտնձգություն կատարել իրենց տարածքային ամբողջականության նկատմամբ:

Իսկ Չեռնոմիրդի՞նն ինչ «փորագով» ունի: Պարզվում է՝ բավական մեծ: Շուտով հարավ-նորվեգական Բերգեն նավահանգստային քաղաքում հավաքվելու են նույն մերձբալթյան երեք երկրների, ինչպես նաեւ սկանդինավյան պետությունների՝ Նորվեգիայի, Շվեդիայի, Դանիայի, Ֆինլանդիայի եւ Իսլանդիայի արտգործնախարարները: Այս բավական բարձր մակարդակի համաժողովը, Միացյալ Նահանգների պետքարտուղարի եվրոպական հարցերի գծով օգնական Գրոսմանի մասնակցությամբ, քննարկելու է տարածաշրջանային անվտանգության համակարգի ստեղծման հարցը: Խոսքը վերաբերում է Բալթիկայի օդային տարածքի էլեկտրոնային դիտարկման համակարգի ստեղծմանը, որի աշխատանքների սկզբնական փուլը ֆինանսավորում է ԱՄՆ-ը:

Ո՞վ կարող է դադարեցնել այդ տարածքների անվտանգությանը եւ ո՞ւմ դեմ է ստեղծվում «դիտարկման համակարգը»: Պատասխանը միանշանակ է: Եվ Չեռնոմիրդինը, ակնհայտորեն, մտադիր է գրել այդ առթիվ մերձբալթյան երկրների տագնապները: Բայց նրան, անշուշտ, ոչ այնքան երեկվա «կրտսեր եղբայրների» հոգսն է, եթե նա ճանաչել է տվյալ երկրների անկախությունը եւ նույնիսկ իր կողմից երաշխավորել նրանց անվտանգությունը:

Կարծում եմ հարցն իրավունքի մեջ չէ, այլ այն հեռանկարի, որ ՆԱՏՕ-ի հետագա ծավալման դեպքում ռուսաստանյան անկյավը Կալինինգրադի մարզը, կհայտնվի ՆԱՏՕ-ի ուժերի շրջապատման մեջ: Կալինինգրադը պատմական Պրուսիան, որ Ռուսաստանին է անցել Երկրորդ աշխարհամարտի արդյունքներով: Եվ Մոսկվան չի կարող չանհանգստանալ, որ այժմ անկլավային վիճակում հայտնված մարզը, ՆԱՏՕ-ի զորքերով շրջափակվելու դեպքում, նրանց ճնշման տակ կարող է եւ... «գնալ» իր ձեռքից: Ահա ինչու Չեռնոմիրդինը սեպտեմբերի 4-ին կտրականապես ասել է, թե իրենք «ոչ մի պարագայում թույլ չեն տա Կալինինգրադի մարզի կարգավիճակի որեւէ վերանայում»: Ասել է՝ այդպիսի «վերանայման» հարցը արդեն իսկ դրվում է կամ դրա վտանգը Մոսկվան զգում է: Ամենեին պատահական չէ, որ Ռուսաստանի պաշտպանության նախարար Իգոր Սերգեեւը, երկրորդելով վարչապետին, հայտարարում է, որ «եթե Հյուսիսատլանտյան դաշինքը իր գործունեությունը տարածի Արեւելյան Եվրոպայի երկրներում, ապա Ռուսաստանը կուժեղացնի իր ռազմական ներկայությունը Կալինինգրադի մարզում»: Ընդամենը բացահայտորեն զենք շաչեցնելով կամ այդպիսի հնարավորության մասին ակնարկելով, Մոսկվան հայտարարում է, թե «մարզում ռուսական ռազմական ներկայությունը դուրս չի գալիս Եվրոպայում սովորական սպառազինությունների սահմանափակման մասին պայմանագրով իրենց ստանձնած պարտավորությունների շրջանակներից»: Չեռնոմիրդինն, իմ կարծիքով, գնացել է մերձբալթյան երկրներին զգուշացնելու, թե բանակցությունների ձայնին չանսալու դեպքում «Կալինինգրադում ռուսական ռազմական ներկայությունը» կարող է նաեւ... դուրս գալ պայմանագրի շրջանակներից: Կամ գուցե, գնացել է ակնարկելու, որ իրենց չհաղթահարեն գնալ այդ քայլին: Ահա թե ի՞նչ է «կորցրել» Չեռնոմիրդինը Վիլնյուսում:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱԶԳ

Մշակույթ

Երբ գա մենահամերգիս օրը, Գերմանիայում Շուբերտ չէ, Կոմիտաս եմ երգելու

Բեռլինի Դոյչե օպերայում Հասմիկ Պապյանի «Տոսկան» լսելու էին եկել ոչ միայն Գերմանիայի տարբեր ծայրերից, այլեւ Լեհաստանից: Անհեւակայելի էր, սակայն դերասանական մուտքի մոտ հավաքվածներից շատերն անգիր գիտեին Հասմիկի խաղացանկը ու հետեւում էին նրան խաղից խաղ, երկից երկիր: Հայ լուսաբանիս համար հոդվածի ներկայացման ժամանակ շատ էր: Ընդմիջմանը Ֆրանսիայից ժամանած ճնճղաձայնը հիացած խոսում էր Հասմիկի բեմական կուլտուրայի մասին, մյուսները շեշտում էին նրա զգայական մատուցումը, գեղեցիկ արտահայտությունը:

– Քո երկրպագուների հետ զրույցից տեղեկացա, որ գերմանացիները լավ ծանոթ են հայ երգիչներին՝ Գեղամ Գրիգորյան, Սոնա Ղազարյան, Պոզապալյան... Նոր անուններ կգա՞ն Հայաստանից:

– Անպայման: Հայաստանում շատ լավ ձայներ կան հիմա: Բայց ով դուրս չի կարողանում գալ, դեռեւս լիարժեք չէ: Հրաշալի ձայնի հետ հազար ու մի մանրուք կա, որ պիտի արվի, իրար գումարած ահռելի աշխատանք, զոհաբերություն: Եթե պատճառ են բերում պայմանները, համաձայն չեմ: Ես էլ արտակարգ պայմաններ չեմ ունեցել: Այն ժամանակ շատ լավ բաներ կային եւ կային վատ բաներ: Պայքարի ոլորտը գրեթե նույնն է մնացել, ձեւերն են փոխվել: Այն ժամանակ ես պայքարում էի, որ հնարավորություն ունենամ Մոսկվայում երգել: Չես պատկերացնի որքան դռներ եմ թակել: Այսօր ոչ մեկին չեմ ուզում բողոքել, որովհետեւ սիրով եմ հիշում նրանց էլ, ովքեր դռներ են շրխկացրել վրաս, դա ինձ օգնել է այստեղ հասնել: Այն ժամանակ այդ դժվարությունը կար, այսօր մեկ ուրիշը, ուրեմն խոչընդոտներ հավերժ լինելու են: Այսօր արտասահմանի երգիչների համար էլ ահռելի դժվարություններ կան: Այսինքն դա Հայաստանի, ԱՄՆ-ի, Գերմանիայի հետ կապ չունի, արվեստագետի ճակատագիրն է այդպիսին: Իսկ ամենակարեւորը կա՝ այսօր դու կարող ես ասպարեզ դուրս գալու ճանապարհը գտնել, ինչն այն ժամանակ գրեթե չկար: Միակ բանը, որ ինձ համար անցյալում լավ էր, այն էր, որ ես թատրոնում երգելու հնարավորություն ունեի, ինչը հիմա չկա:

– Հայաստանցի երգիչներից ո՞ւմ կառանձնացնես, ո՞վ կարող է եվրոպայում անուն ունենալ:

– Ովքեր կարող էին դուրս գալ, դուրս են եկել, ովքեր մնացել են, նշանակում է չեն կարող դուրս գալ: Գերմանիայում մի շատ լավ երգչուհի կա՝ Բրիգիտա Ֆասբենդեր, մեցցո-սոպրանո է, 52-53 տարեկան է դեռ, մի 20 տարի կարող էր երգել, որովհետեւ ձայնը հրաշալի վիճակում է, բայց բեմը թողեց: Հիմա օպերային թատրոնի տնօրեն է: Ինձ հրավիրել էր մի բեմադրության: Տեսա, ասացի՝ ես Ձեր ձայնի երկրպագուն եմ, ասաց՝ հիմա ես եմ քո երկրպագուն: Ոտքերս, ասես, գետնից կտրվեցին: Այդ վերաբերմունքը շատ բարձր է խոսում արվեստագետի մասին: Նույնը մեր երգիչներից շատերն ունեն, ապրում են երիտասարդներով, նրանց մեջ են տեսնում իրենց երիտասարդությունը, եւ դա իրենց չի ծերացնում: Հիծաղելի է մտածել, թե արվեստը [illegible]անով սկսվել, [illegible]զանով էլ վերջանալու է:

– «Ազգ» ընթերցողը տեղեկացավ, որ Վաշինգտոնում մեծ հաջողություն ունեցար [illegible]ցյալ տարի, եւ Պլասիդո Դոմինգոն [illegible] բարձր գնահատեց քո Միմին: Թե՞չ ընթերցողներից շատերին էր հետաքրքրում, թե դրանից հետո որտեղ երգեցիր:

– Շատ հպարտ եմ, որ հայաստանյան ունկնդրին հետաքրքրում է իմ արվեստը: Վաշինգտոնից հետո Միլանում երգեցի 2 համերգ՝ Բրամսի «Ռեքվիեմը» եւ Բեթհովենի 9-րդ սիմֆոնիան: Հետո Բեթհովեն երգեցի Շվեյցարիայում, Բոննում՝ «Դոննա Աննա», հետո «Տոսկայի» մի բեմադրություն Գերմանիայում, Նիցցայում «Նաբուկոյի» նոր բեմադրություն, որտեղ Աբիգայլ էի, ապա Լիոնում՝ «Նաբուկո», հետո Բեռլին, Ռավեննայի փառատոն, որտեղ պիտի երգեմ Աբիլլա, դրանից հետո «Նորմայի» պրեմիերա Վիեննայում, ուր այն 20 տարի չի լսվել, վերջին անգամ Մոնսերատ Կաբալիեն է երգել 1977-ին: Հետո Դյուսելդորֆ... մինչեւ 2001 թվականը ծրագրերս կան ըստ օրերի, շատ հետաքրքիր անելիքներ ունեմ, 25 դերերգ, որոնց թիվն ավելանում է:

– Քո ճանաչումը, հնարավորությունները չե՞ն նպաստի, որ որեւէ բեմադրիչ աշխարհի ճանաչված թատրոններից մեկում բեմադրի հայկական մի օպերա:

– Հնարավոր է: Իմ մենեջերների հետ հայկական օպերաների մասին շատ եմ խոսում: Իմ կարծիքով, ամենաուշագրավն ու հետաքրքրականը «Արշակ երկրորդն» է, թե երաժշտության, թե նյութի իմաստով: Այն շատ է հիշեցնում Վերդիի օպերաները, մաչելի կլինի: Չեմ ուզում բարձրաձայն ասել, բայց մեծ ծրագրեր կան: Դրա օրն էլ կգա:

– Ո՞ր ռեժիսորներին կառանձնացնես, ո՞ւմ հետ ես առավել հետաքրքիր աշխատում:

– Սկզբում, երբ Գերմանիա եկա, աշխատեցի գերմանացի շատ հայտնի կինոռեժիսոր Հերցոգի հետ: Շատ ուրախ եմ, որ Կաղ Հայնց Հերմանի հետ «Տրավիատա» պիտի փորձենք: Պիտեր Բրուկների անունը չմոռանամ, որի հետ պատրաստեցի «Դոն Ջովաննի»: Ռոբերտ Չուլիի հետ «Դոն Ջովաննին» հրաշալի էր Մուլհայմի թատրոնում: Յուրգեն Ռոզե՝ աննկարագրելի ճաշակի տեր մի անձնավորություն, նրա հետ՝ «Տրավիատա», 85-ամյա Ջանգալո Սենոտիի հետ հետաքրքիր էր Վաշինգտոնի թատրոնում «Լա Բոհեմը», շատ-շատերը կան, բոլորին հիմա դժվար է թվարկել:

– Մի անգամ ասացիր, որ ծանրաբեռնվածությունը չի խանգարում, որ տարին գոնե 1 անգամ հայ օպերային ասպեղը հավաքվեն, երեւանի օպերային բեմում համերգ տան: Քո օրացույցում նշվա՞ծ է, թե հայաստանյան համերգ երբ է լինելու:

– Ոչ: Ես հրավեր չունեմ երեւանից: Եթե որեւէ համերգի հատուկ հրավեր ունենամ, ժամանակ կգտնեմ: Նախորդ համերգները պատահական են եղել: Երեւանում էի եւ ասացին՝ դե եկել ես, մի բան երգիր: Ես կուզենայի, որ իմ համերգը Երեւանում ավելի «լուրջ» լիներ, նախօրոք իմանայի, նոտաներ, ծրագրեր բերեի, մի ծրագիր, որ Հայաստանում երբեւէ չեմ երգել: Այսօրվա իմ պահանջներին չի համապատասխանում Երեւանյան սրճարանում նման առաջարկ ստանալ: Կարելի է ավելի սիրուն իրադարձություն անել՝ նախօրոք պայմանավորվել որեւէ տենորի հետ, որեւէ դիրիժորի հրավիրել, բարություն մտցնել: Ես կուզենայի իմ երգած ներկայացումներից որեւէ մեկն այսօր Հայաստանում երգել: Լավ բեմադրություններ կային՝ «Նորմա», «Միդա», «Սեւիլյան սափրիչ», «Տրուբադուր», այսօրվա պայմաններում դրանք հնարավոր է ինչ-որ ձեւերով վերականգնել, պարտադիր չէ նոր հագուստներով, հները կան: Կարելի է որեւէ հյուրախաղային ներկայացում կազմակերպել: Պատրաստ եմ, սիրով կհրաժարվեմ իմ որեւէ ծրագրից Հայաստանում երգելու առիթով:

– «Մեգոդնյա» թերթին անցյալ տարի տված քո մի հարցազրույցում կարեւորել էիր կոմիտասյան համերգդ: Գերմանահայերն սպասում են քո կոմիտասյան համերգին:

– Ինձ համար ուրախալի երեւույթներից էր անցյալ տարի Գերմանիայում կայացած կոմիտասյան համերգս: Դրանից հետո բազմաթիվ հրավերներ ունեմ: Համերգը ոչ միայն Հաննովերից ոչ հեռու գտնվող Լոկկումում արձագանք գտավ, դրանից հետո ծրագիր կար Բեռլինում երգելու, Ֆրայբուրգի եւ Լյուդվիգ Սաբընի փառատոներում ներկայացնելու, բայց ճանի որ իմ ժամանակը շատ սուղ է, պիտի կարողանամ իրենց ծրագրերին իմ ժամանակը հարմարեցնել: Ես ուզում եմ, որ դա Կոմիտասին իսկապես արժանի համերգ լինի, նրա ստեղծագործությունը ներկայացնելու, պրոպագանդելու առիթ: Համերգ կազմակերպելն այստեղ դժվար չէ, ես ավելի լուրջ մտահոգություններ ունեմ: Մինչեւ երգելս, ինձ Կոմիտաս ներկայացնելու համար պատրաստ չէի համարում: Շատ կարեւոր է, որ այդպիսի ծրագիրը երգի մեծ աուն ունեցող երգչուհի, ես դրա համար դեռ ճանապարհ ունեմ անցնելու: Դեռ չեմ շտապում: Երբ գա օրը, եւ մենահամերգ տամ, կնախընտրեմ ոչ թե Շուբերտ, այլ Կոմիտաս երգել, որովհետեւ պարտավոր եմ:

– Փառքի ճանապարհին հայերից շատերը տրտնջում են՝ ախ, հայ չլինեիր, -յանը խանգարում է: Դու ի՞նչ զգացում ունես:

– Դժբախտության զգացում երբեւէ չեմ ունեցել: Իմ ազգային պատկանելիության համար չեմ ամաչել, ոչ էլ մտածել եմ, թե ուրիշ ազգից կարող էի լինել: Մի բան կարող եմ ասել՝ իմ հաջողությունների գաղտնիքն իմ արմատներն են: Ես շնորհակալ եմ իմ ծնկատագրից որ ծնվել եմ Հայաստանում: Այսօր ինչ-որ կատարվում է, այն լուրերը, որ ինձ հասնում են, շարունակում են ինձ ապրեցնել: Լավ եմ զգում, երբ հարցնում են՝ որտե՞ղ ես սովորել այդպես երգել: Իտալացի տենորն էլ, որին նոր ունկնդրեցիր, գեղեցիկ ձայն ուներ, բայց առանձնապես երաժշտական կամ զգայական չէր, որովհետեւ եվրոպացիներն այսօր մտածում են՝ այսօր որտե՞ղ է ավելի լավ ծաղելը: Կենտրոնական Եվրոպայում այսօր դժվար է գտնել ազգային մտածողությամբ, մտահոգություններով ապրող մարդկանց:

Ինձ համար դժվար է խոսել, ես Հայաստան եմ գալիս հյուրի նման: Այս 5 դժվար տարիները ես Հայաստանում չապրեցի: Ես շատ բան եմ կորցրել, չեմ տեսել ինչպես է քայլում մեր հանրապետությունը, ինչպես է ապրում, հաղթահարում դժվարությունները: Դրանց մասին միայն լսում եմ: Շատ բաներից զրկված եմ ապրում, այս վազքի, այս բարեկեցության, հարմարավետության մեջ դժվար է ասել՝ ո՞վ է այսօր ավելի հարուստ:

ԱՆԱՏԻՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Բեռլին

ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐ

Ստեղծագործական նվաճումների բարշավին

Համերգի ազդագիրը վաղուց ծանուցում էր, որ մայրաքաղաքի «Արամ Խաչատրյան» համերգասրահում ելույթ է ունենալու ջութակահար Նիկոլայ Մադոյանը (Գերմանիա):

Հիրավի, չնայած երիտասարդ տարիքին, երաժիշտը մեծ համբավ եւ անուն է ձեռք բերել: Միջազգային հինգ մրցույթների դափնեկիր, նա միեւնույն ժամանակ, ահա արդեն տաս տարի Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի մենակատար է եւ ամենուր բարձր է պահել հայկական կատարողական արվեստի հեղինակությունն ու պատիվը: Ծնվել է Երեւանում, 1973 թվականին: Ութ տարեկան էր, երբ ընդունվեց Երեւանի թիվ 12 երաժշտական դպրոցը: Երեք տարի անց ավարտեց այն, որից հետո երկու տարի սովորեց Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում պրոֆեսոր Հրաչյա Բոգդանյանի դասարանում: Տասներկու տարեկան էր, երբ Խորհրդային Միության երաժշտական պատվիրակության կազմում համերգային շրջագայության մեկնեց Չինաստան: Դրանից հետո նրա ընտանիքը տեղափոխվեց Նովոսիբիրսկ, ուր երաժիշտը ուսումը շարունակեց պրոֆեսոր Զախար Բրոնի դասարանում: Երկու տարի անց տասնչորս տարեկան պատանին դարձավ Վենյավսկու անվան միջազգային մրցույթի դափնեկիր: Շուտով պրոֆեսոր Զախար Բրոնի դասարանի լավագույն ուսանողների կազմում Նիկոլայ Մադոյանը համերգային շրջագայության մեկնեց Գերմանիայի Դաշնակցային Հանրապետություն: Երաժիշտի ելույթներից հետո նրան առաջարկեցին մնալ Գերմանիայում: Այդ տարիներին Նիկոլայ Մադոյանը դարձավ Գերմանիայում եւ Ճապոնիայում անցկացված մրցույթների հաղթող:

Երաժշտական կրթությունն ավարտելուց հետո սկսվեց նրա ստեղծագործական գործունեությունը ժամանակի նշանավոր երաժշտական գործիչների հետ: Անվանի երաժիշտ Ստենը մի առիթով ասել է «Նիկոլայ Մադոյանը տաղանդավոր ջութակահար է»:

Այժմ Նիկոլայ Մադոյանը ճանաչված դիրիժորներ Դմիտրի Կիտայենկոյի, Վալերի Գեորգիեւի, Առնոլդ Կացի հետ համագործակցելով հանդես է գալիս աշխարհի տարբեր երկրներում Քյոլնի եւ Լոնդոնի սիմֆոնիկ նվագախմբերի հետ:

Ճանաչված երաժիշտը կրկին մայր հայրենիքում էր եւ նրա երկրպագուները հաճելի առիթ ունեցան հաղորդակցվելու իր բարձր կատարողական արվեստին:

Երաժիշտը ներկայացրեց հարուստ ու բազմազան ծրագիր, որը կազմված էր Բրամսի, Պրոկոֆեւի եւ Շուբերտի ստեղծագործություններից: Ջութակահարին նվագակցում էր Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս, դաշնակահարուհի Արմինե Գրիգորյանը:

Նիկոլայ Մադոյանի մենահամերգը կազմակերպել էին Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունն ու Հայաստանի պետական ֆիլհարմոնիան:

Մ. Հ.

ԿԱՊԵՐ

ԵՊՀ-ի գրադարանը վերականգնում է հին կապերը

Արդեն մի քանի տարի է, ինչ Հայաստանը պետական ճանապարհով չի ստանում օտար մասնագետ, ուստի մեզ մեծ զարմանք պատճառեցին ԵՊՀ-ի գրադարանում գտնվող անգլերեն նոր գրքերականները: Գրադարանի տնօրեն Վ. Ասլանյանի հետ զրույցից դարձվեց, որ գրքերականները ստացվել են Գերմանիայից: Ռուսական քաղաքի գրադարանից: ԳՖՀ-ի կառավարության որոշմամբ ամեն մի գրադարան պետք է համագործակցի նախկին Խորհրդային Միության հանրապետությունների որեւէ գրադարանի հետ: Դեռ տարիներ առաջ Ռուսական քաղաքը եւ ԵՊՀ-ն սերտ համագործակցության մեջ էին, ուստի մի փոքր ընդհատումից հետո Ռուսական գրադարանը որոշեց վերականգնել այդ կապը: Պետհամալսարանի գրադարանի տնօրենությունից պահանջվեց անհրաժեշտ գրքերի ցանկը, նույնիսկ ճշգրտվեց, թե որ լեզվով կցանկանային ստանալ այդ գրականությունը: Ըստ այդմ կազմվեց օգնության երեքամյա ծրագիր (1996-99), որին գերմանական կառավարությունը տրամադրել է 160 հազար մարկ: Գրքերից բացի, այս նույն ծրագրի շրջանակներում գրադարանին ուղարկվել է համակարգիչ, կազմիչ եւ կտրիչ սարքեր, որոնք պիտի լրացնեն արդեն գրադարանում տեղադրված պատճենահանող սարքը: Այսպիսով հնարավոր կդառնա ոչ միայն պատճենել անհրաժեշտ նյութերը, այլեւ դրանք կազմել վերածելով բրոշուրի ու գրքի: Վերջերս ԵՊՀ-ի գրադարանի պատվիրակությունը եղավ Ռուսական, որտեղ ծանոթացավ գերմանական գրադարանային համակարգին, բանակցեց առաջիկայում կազմակերպվելիք օգնության շուրջ:

Սեպտեմբերի 23-ին գերմանական պատվիրակությունը պատասխան այցով կժամանի Երեւան:

Ռ. ՍԱՐՈՅԱՆ

Սեպտեմբերի 4-ին Նյու Յորքի Ռադիո Սիթի Մյուզիք հոլում Սփայս գրլզի «համով աղջիկները» կեցվածք են ընդունել լուսանկարիչների առջեւ՝ ոգեւորված լավագույն տեսաերգային կատարման համար շնորհված մրցանակից Wannabe երգի համար: Խումբը իր հաղթանակը նվիրաբերեց օգոստոսի 31-ին ավտովթարից ողբերգաբար զոհված իշխանուհի Դիանայի հիշատակին

ԱԶԳ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

Խորեն Հովհաննիսյան. «Մեր փողոցում էլ տոն կլինի»

Հայաստանի հավաքականը պատրաստ է

ՀՐԱՅՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Այսօր «Հրազդան» մարզադաշտում Հայաստանի ազգային հավաքականը ֆուտբոլի աշխարհի 1998 թ. առաջնության ընտրական մրցաշարի հերթական խաղը կանցկացնի այս անգամ Ալբանիայի ֆուտբոլիստների հետ: Սա կլինի երկու երկրների ընտրանիների երկրորդ մրցամարտը: Առաջինը անցյալ տարվա նոյեմբերի 9-ին կայացել է Տիրանայում եւ ավարտվել 1-1 արդյունքով: Ֆուտբոլասերները հիշում են, որ այդ խաղում հայ ֆուտբոլիստներին միայն խաղավերջում հաջողվեց խուսափել պարտությունից, շնորհիվ Հակոբ Տեր-Պետրոսյանի (87-րդ րոպե) խփած գոլի: Այնպես որ կարծում ենք, մեր տղաները շատ լավ են գիտակցում այսօրվա հանդիպման նշանակությունը: Մանավանդ որ հայկական թիմին լավ առիթ է ներկայացել վերջապես առաջին հաղթանակը տանելու սեփական հարկի տակ: Թեեւ մյուս կողմից էլ պարզ է, որ մեր ֆուտբոլիստներին ոչ թե անհոգ զբոսանք է սպասում, այլ համառ եւ թեժ պայքար, խնդրի համոզված եմ, ալբանացիները երեւան չեն ժամանել «գեները վայր դնելու» մտադրությամբ: Իսկ նրանում, որ Բալկանյան թերակղզու հարավ-արեւմուտքում գտնվող այս երկրի ֆուտբոլիստները «ամուր ընկույզ» են եւ մարտական բնավորություն ունեն, արդեն համոզվել են եվրոպայի չեմպիոն Գերմանիայի, Ուկրաինայի եւ Պորտուգալիայի հավաքականները, որոնց միայն մեծ ջանքերի շնորհիվ է հաջողվել հաղթահարել համառ մրցակցին: Այլ մեկնաբանություններն ավելորդ կլինեն:

Իսկ ինչպե՞ս է առաջիկա հանդիպմանը նախապատրաստվել Հայաստանի ազգային հավաքականը: Ուրբաթ ավագ մարզիչ Խորեն Հովհաննիսյանը ուսումնամարզական հավաքի էր հրավիրել 23 ֆուտբոլիստների, որոնցից երկուսը՝ Էրիկ Ասադուրյանը եւ Ռոման Բերեզովսկին միայն երեկ միացան խաղընկերներին: Հավաքականը հանգրվանել էր «Արմենիա-2» հյուրանոցում: Հավաքականի խաղացողները մարզվում էին սովորաբար երեկոյան ժամերին: Դրա ընթացքում հիմնական ուշադրությունը դարձվում էր երկկողմանի մեկ հպումով խաղին, հեռահար հարվածներին, տարբեր օդակների արագ եւ արդյունավետ համագործակցությանը, պաշտպանի եւ հարձակվողի պայքարին խաղադաշտի տարբեր հատվածներում, հատկապես, գոռհի ավարտական փուլում, սանդարտ դրությունների կատարմանը, 11 մետրանոց հարվածների իրացմանը: Հարկ է նշել, որ տղաները մեծ ջանասիրությամբ էին կատարում գլխավոր մարզիչ Խորեն Հովհաննիսյանի, մարզիչներ Անդրանիկ Ադամյանի եւ Սամվել Դարբինյանի հանձնարարությունները: Հաճախ դա այն աստիճանի էր հասնում, որ մարզիչներն էլ չէին դիմանում գայթակղությանը եւ միանում մարզվողներին: Սա հատկապես վերաբերում է Խորեն Հովհաննիսյանին: «Արարատի» եւ ԽՍՀՄ հավաքականի նախկին կիսապաշտպանը այնպիսի ճարպկությամբ էր կարգավորում սաների խաղը, տալիս գեղեցիկ եւ ճշգրիտ փոխանցումներ, որ ակամա մտքիս էր գալիս ռուսական ասացվածքը. «Դեռեւս վառող կա վառոդամանում»: Հավաքականի տղաներն էլ ետ չէին մնում մարզչից, թեեւ տեմպը արագացնելիս հաճախ սխալվում էին: «Տղերք, էսպես մի հպումով փոխանցումներով, արագ պետք է խաղալ նաեւ վաղը», դիմում է շրջապատած ֆուտբոլիստներին Հովհաննիսյանը:

Մարզման ավարտից հետո Խորեն Հովհաննիսյանին խնդրեցինք պատասխանել մի քանի հարցերի.

– Խորեն, թիմը պատրաստ է խաղին:

– Այո, բոլորն էլ լավ մարզավիճակում են եւ մարտական տրամադրությամբ են դուրս գալու խաղադաշտ:

– «Փյունիկից» հեռացած տղաների վերադարձը հավաքական բացասվո՞ւմ է:

– Ինձ համար անհասկանալի է, թե ինչու է մամուլում անընդհատ շոշափվում այդ հարցը: Մենք ունենք հոյակապ թիմ, հոյակապ տղաներ կան: Իմ կարծիքով, այսօր հավաքվել են ամենաարժանավորները, ուժեղները, որոնց մեծամասնությունը հանդես է գալիս Հայաստանի ակումբներում: Բացառված չէ, որ լավ խաղացողներ հայտնաբերելու դեպքում նրանց էլ հրավիրենք հավաքական: Խոսքը վերաբերում է թե դրսի, թե տեղի ֆուտբոլիստներին: Սիա այժմ էլ Թահմազյանին ենք վերցրել Գյումրիից, հավաքական է վերադարձվել Երվանդ Կրբաշյանը՝ «Երեւանից»: Այնպես որ, բոլոր լավագույնների առջեւ ազգային թիմի դռները բաց են:

– Նոր տեղեկություններ ունե՞ք մրցակցի մասին:

– Մենք խնդրել ենք Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիային տրամադրելու Ալբանիայի հավաքականի մասնակցությամբ խաղերի տեսագրություններ: Տեղյակ ենք, որ նրանց ճամբարում 8 նոր ֆուտբոլիստներ «լեգեոնականներ» են հայտնվել: Գոնե տեսաերիզի միջոցով ծանոթանանք մրցակցին: Փաստորեն որեւէ կոնկրետ տեղեկություն բացակայում է:

– Ի՞նչ սպասելիքներ ունեք այս խաղից:

– Նրանք, ովքեր կարծում են, թե Ալբանիայի թիմին հեշտ է հաղթելը, շատ են սխալվում: Անցած հանդիպումները ցույց տվեցին, որ ալբանացիներն առաջվա խղճուկ ֆուտբոլիստները չեն եւ կարող են արժանի դիմադրություն ցույց տալ ցանկացած մրցակցի: Մենք ամեն ինչ ներդնելու ենք հաղթելու համար: Սակայն ալբանացիներն էլ կորցնելու բան չունեն եւ, կարծում եմ, անկասկանդ կխաղան ու նույնպես կձգտեն վաստակել 3 միավոր:

– Եղանակի կտրուկ փոփոխությունն ազդե՞լ է տղաների հիմնազգացողության վրա:

– Նշեմ, որ հայ ֆուտբոլիստները միշտ էլ դժվար են տարել շոգից կտրուկ անցումը ցրտին: Ոմանց մոտ օրգանիզմի թուլություն կա, բայց դրա վերացման միտում է նկատվում: Բացի այդ, որոշ տղաների մոտ բացասական ախտանիշեր էին նկատվել՝ կապված մայրաքաղաքում խմելու եւ ոռոգման ջրերի համակարգերի խառնվելու հետ: Փառք Աստծո, այդ ամենը հետեւում է մնացել: Այնպես որ, պետք է ձգտենք, որպեսզի վերջապես մեր փողոցում էլ տոն լինի եւ ժողովուրդն ականատես դառնա Հայաստանի հավաքականի անդրանիկ հաղթանակին «Հրազդան» մարզադաշտում:



Վերջին ցուցումներ



Դժվար է ուսման մեջ. հետս մարտում

Հայաստանի հավաքական

դարպասպահներ
Ռոման Բերեզովսկի («Զենիթ», Ս. Պետերբուրգ, Ռուսաստան)
Արմեն Պետրոսյան («Սիման-Սպահան», Իսպահան, Իրան)
Հարություն Աբրահամյան («Արարատ»)

պաշտպաններ
Երվանդ Կրբաշյան («Երեւան»)
Սարգիս Հովսեփյան («Փյունիկ»)
Հայկ Գեւորգյան («Փյունիկ»)
Հարություն Վարդանյան («Շիրակ»)
Ֆելիքս Խոջոյան («Շիրակ»)
Տիգրան Գասպարյան («Արարատ»)
Ռաֆայել Նազարյան («Արարատ»)

կիսապաշտպաններ
Արթուր Պետրոսյան («Շիրակ»)
Վարդան Մինասյան («Փյունիկ»)
Համլետ Մխիթարյան («Փյունիկ»)
Ալբերտ Սարգսյան («Լոկոմոտիվ», Մոսկվա, Ռուսաստան)
Հովհաննես Թահմազյան («Շիրակ»)
Հակոբ Տեր-Պետրոսյան («Արարատ»)

հարձակվողներ
Վարազդատ Ավետիսյան («Փյունիկ»)
Տիգրան Եսայան («Երեւան»)
Արսեն Ավետիսյան («Փյունիկ»)
Կարապետ Միքայելյան («Յուկոնգ», Սեուլ, Հրվ. Կորեա)
Էրիկ Ասադուրյան («Գենգան», Ֆրանսիա)
Գառնիկ Ավալյան («Կոմիլյա սովետով», Սամարա, Ռուսաստան)
Արմեն Շահգելդյան («Փյունիկ»)

Ավագ մարզիչ՝ Խորեն Հովհաննիսյան
Մարզիչներ՝ Անդրանիկ Ադամյան, Սամվել Դարբինյան

ՇԱԽՄԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆ

ՆՅՈՒ ՎԻՆԴ

375002 Երևան,
Ամիրյան 15,
(Օրբիտա խանութի շենքում)
հեռ. / ֆաքս 537703
586604

Կենցաղային օդափոխիչներ

	դրամ
Պատի սպիտ հատակարգեր	
SAMSUNG ASH 1206ERH	520000
FUNAI FC-90SS	462800
FUNAI FC-90SH	514800
FUNAI FC-120SH	572000
FUNAI FC-180SH	832000
FUNAI FC-240SH	936000
FUJI RSW-97R	530400
FUJI RSW-127R	579800
FUJI RSW-177R	884000
FUJI RSW-247R	962000
TOSHIBA RAS-13SKHKX/SA	689000
TOSHIBA RAS-10SKX/SA	546000
Երկանգամյա սպլիտ համակարգեր	
FUNAI FC-180 2SH	1040000
FUNAI FC-240 2SH	1092000
Պատուհանային օդափոխիչներ	
TOSHIBA RAC-09PSW WINDOW	254800
TOSHIBA RAC-09YH (SW)	306800
Շտեմարանի օդափոխիչներ	
FUNAI 7500 C	390000
FUNAI 3500 C	353600

Համակարգիչներ

Համակարգչային լրիվ մեկ տարվա երաշխիք

		դրամ
P - 133 AMD K5	8 EDO / 1,08Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	413100
P - 133 AMD K5	16 EDO / 1,08Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	432990
P - 166 AMD K5	8 EDO / 1,08Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	430440
P - 166 AMD K5	16 EDO / 1,08Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	446760
Intel P - 100	8 EDO / 1,28Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	424320
Intel P - 100	16 EDO / 1,28Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	435540
Intel P - 120	8 EDO / 1,28Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	431970
Intel P - 120	16 EDO / 1,28Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	445230
Intel P - 133	8 EDO / 1,28Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	432990
Intel P - 133	16 EDO / 1,28Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	446250
Intel P - 150	8 EDO / 1,28Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	434520
Intel P - 150	16 EDO / 1,28Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	447780
Intel P - 166	8 EDO / 1,28Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	461550
Intel P - 166	16 EDO / 1,28Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	473790
Intel P - 166 MMX	8 EDO / 1,28Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	496230
Intel P - 166 MMX	16 EDO / 1,28Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	508470
Intel P - 200 MMX	8 EDO / 1,28Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	568140
Intel P - 200 PRO	16 EDO / 1,28Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	580380
Intel P - 200 PRO	8 EDO / 1,28Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	778770
Intel P - 200 PRO	16 EDO / 1,28Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	797640
Intel Pentium II P233	16 EDO / 2,1Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	826200
Intel Pentium II P233	32 EDO / 2,1Gb / 3,5" / 1 Mb, S3 Trio 64V+, PCI	870060

Բոլոր մոդելների կազմի մեջ մտնում են
Monitor FUNAI 14" keyboard 104 key Win 95 CHICONY
Պատվիրատուի խնդրանքով կոմպլեկտի կոնֆիգուրացիան կարող է փոփոխվել
Ցանցով կոմպլեկտ: Դեռ ևս չի կրճատվում
Mouse SPC 2bt, mouse pad PVC

Կենցաղային սարքեր

ՍԱՌՆԱՐԱՆՆԵՐ	դրամ
ARISTON B 450L (RD)SX	481440
ARISTON DF 335.3X(EU)	375360
ARISTON EDNF 480(EU)	514080
GOLD STAR GR 272SF	308040
GOLD STAR GR 462CF	460020
GOLD STAR GR 313SF	392700
GOLD STAR GR 392CF	419730
GOLD STAR GR 403SF	460020
INDESIT GR 3300WS	253670
ZANUSSI ZFC 25/11RD	612510
ԼՎԱՑՔԻ ՄԵՔԵՆԱՆԵՐ	
ARISTON AL 1456 TX	378420
ARISTON AL 536 TX	287640
ARISTON AI 858 CTX	369750
ARISTONAL 957 TX ST	345780
INDESIT 2296 XW	347310
INDESIT WG 421 TX	236640
INDESIT WG 835 TX	276830
INDESIT WGD 1035 T	344250
INDESIT WGD 934 TX	337620
INDESIT WN 421 W	205530
INDESIT WN 421 XW	217260
INDESIT WT 600 U	309570
ՓՈՇԵԿՈՒԼՆԵՐ	
DAEWOO RC 407	61710
DAEWOO RC 705D	69870
DELONGI M 31	138720
DELONGI XTC12	78540
DELONGI XTC13E	101490
DELONGI XTC14E	105570
DELONGI XW 1200PD	69360
DELONGI dustbag	2040
DELONGI dustbag+antibac	18360
DELONGI PENTA ELECTR.	272850
DELONGI PENTA VAP	232560
GOLD STAR V 3300T	55080
GOLD STAR V 3310D	49470
GOLD STAR V 4030T	62220
GOLD STAR V 4040HT	74460
GOLD STAR V 982TE	66300
MOULINEX BG 4	61200
PHILIPS 8735	94860
SAMSUNG 550	62220
SAMSUNG TC 9014 V	80580
SAMSUNG TC 9015 V	88740
ՄԻԿՐՈԱԼԻՔԱՅԻՆ ՎԱՌԱՐԱՆՆԵՐ	
MOULINEX Y 85	331500
SAMSUNG M 745R	87720
SAMSUNG M 945R	111180
SAMSUNG CE 735GR	119850
SAMSUNG CE 945GR	144840
SAMSUNG CE 95GF	189720
SAMSUNG G 643CR	114750
ՀՅՈՒ	
IMARFLEX CF 9301	45390
ՖՐԻՏՅՈՒՐՆԻՑԱՆԵՐ	
MOULINEX E 13	30090
MOULINEX T 43	37740
MOULINEX T 47	57120
ԽՈՀԱՆՈՑԱՅԻՆ ԿՇԵՌՔՆԵՐ	
KRUPS 844	10200
ՄԱՆԿԱԿԱՆ ՍՊԱՍՔ	
MOULINEX W 17	53550
ՍՐՃԵՓՆԵՐ	
MOULINEX AM 7	53040
MOULINEX T 89	28560
MOULINEX W 70	14790
ՍՐՃԱՂԱՑՆԵՐ	
MOULINEX 505	10200
MOULINEX 843	13770
ԽՈՀԱՆՈՑԱՅԻՆ ԿՈՄԲԱՅՆՆԵՐ	
MOULINEX A 77 R. D.	84150
MOULINEX A 77 R. B.	69360
ՄԻՔՍԵՐՆԵՐ	
MOULINEX A 28	20910
MOULINEX A 29	21420
MOULINEX D 83	25500
MOULINEX D 84	30090
MOULINEX W 89	14280
ՄՍԱՂԱՑՆԵՐ	
MOULINEX 133	49980
MOULINEX A 14	32130
MOULINEX A 15	41820
MOULINEX mini T 71.1	15300
ՀՅՈՒԹԱՔԱՇԻՉՆԵՐ	
MOULINEX 864	28560
MOULINEX K 76	9180
MOULINEX Y 36	30600
ՏՈՍՏԵՐՆԵՐ	
MOULINEX AG 7	22950
ՋԵՐՄՕԴԱՓՈԽԻՉՆԵՐ	
MOULINEX C 78	51510
ԱՐԴՈՒԿՆԵՐ	
MOULINEX AL 3	44370
MOULINEX AL 9	58650
MOULINEX AX 7	21930
MOULINEX AY 1	23460
MOULINEX E 80	10710
MOULINEX X 66	40800
MOULINEX X 86	24990
MOULINEX X 89	26520
ՖԵՆԵՐ	
KRUPS 422	15300
KRUPS 441	15300
KRUPS 442	17340
KRUPS 683	8670
KRUPS 684	10710
KRUPS 685	10710
MOULINEX L72	6630
MOULINEX L73	7140
MOULINEX L74	7650
MOULINEX L75	8670
MOULINEX L76	9180
MOULINEX L77	12240
MOULINEX L80	14790
MOULINEX TO5	10200
ԷԼ. ՍԱՓՐԻՉՆԵՐ	
PHILIPS 4830 RC/ AC	52020
PHILIPS 555 AC	27030
PHILIPS 5870 RC/ AC	85170
ԹԵՅՆԻԿՆԵՐ	
MOULINEX A 91	20400
MOULINEX AY 7	22950
MOULINEX AZ 1	25500
MOULINEX gold filter L 13	20910
MOULINEX L 13	20400
MOULINEX L 19	22950
MOULINEX T 34	18870

ՆՅՈՒ ՎԻՆԴ 53-77-03 58-66-04

Համակարգչային սարքեր

Տիպ	դրամ
CPU	
P133 AMD K5 w/HEATSINK	54570
P133 AMD K5 w/HEATSINK	69870
INTEL PENTIUM CPU 100 Mhz BOX/HEATSINK	59160
INTEL PENTIUM CPU 120 Mhz BOX/HEATSINK	66810
INTEL PENTIUM CPU 133 Mhz BOX/HEATSINK	76500
INTEL PENTIUM CPU 150 Mhz BOX/HEATSINK	80580
INTEL PENTIUM CPU 166 Mhz BOX/HEATSINK	88634
INTEL PENTIUM CPU 166Mhz w/MMX BOX/HEATSINK	106092
INTEL PENTIUM CPU 200Mhz w/MMX BOX/HEATSINK	178173
INTEL PENTIUM CPU 200 Mhz PRO BOX/HEATSINK	334050
CPU Intel PENYIUM II P-233	371550
MOTHERBOARD	
Motheboard Pentium AL 575	38250
Motheboard Pentium 512K 1 DIMM TX OCTEK	61710
M/B 512K OCTEK FHINO 12VIA	48413
Motheboard Pentium 430VX 512K 2 DIMM (PC PARTNER)	59670
Motheboard Pentium P54C/0TX-250 TITANIUM	84660
Motheboard Pentium p61440FX COMANDER PRO	128520
Motheboard PENTIUM II FIC 440FX	1380758
Motheboard PENTIUM II P61440FX	13965
FAX	
FUNAI FX 8800	130560
FUNAI FX 8000	135660
MEMORY (72pin)	
SIMM: 4Mb EDO-60nc (NEC)	11220
SIMM: 8Mb EDO-60nc (SIEMENS)	16862
SIMM: 16Mb EDO-60nc (PANASONIC)	38250
512 Kb SOJ EDO (256x116) SIEMENS	2040
HARD DRIVE IDE	
HDD 1.28 Gb FUJITSU	105570
HDD 1.7 Gb FUJITSU	97602
HDD 3.2 GB IBM	133930
HDD 4.3 GB IBM	160662
HDD 1 Gb QUANTUM	92820
HDD 4.3 Gb QUANTUM	137357
HDD 1.08 Gb SAMSUNG WN 318820	93840
HDD 2.1SAMSUNG	101714
HDD 1.7 GB SEGATE	103284
HDD 2.5 GB SEGATE	120934
MULTIMEDIA	
Sound Card	
YAMAHA SB 16 PnP	9562
CREATIVE SB 16 VIBRA CT2961 PnP	32130
CREATIVE SB 32 CT3671 PnP	49980
VIBRA 16FM1 SOUND CARD W/FM RADIO	37230
Active Speakers	
YS200 MULTIMEDIA	10663
AIWA SC-C57 (1W+1W) 20W PMPRO	12240
AIWA SC-C57 (5W+5W) 80W PMPRO	37740
AIWA TS-CD20 w/SW (10W+5W+5W) 190W PMPRO	66810
CD - ROMs	
TOSHIBA 12x SPEED CD-ROM DRIVE	44377
PHILIPS 12x SPEED CD-ROM DRIVE	56100
NEC 16x SPEED CD-ROM DRIVE	61200
SONY 16x SPEED CD-ROM DRIVE	62752
CARDS	
1 Mb PC1 S3 Trio 64V+ w/MPEG	15300
1 Mb PC1 S3 Trio 64 Vi w/MPEG	14685
2 Mb PC1 S3 VIRGE 3D w/MPEG	20597
4 Mb PC1 S3 Trio 64 Vi w/MPEG	26087
NETWORK ACCESSORIES	
Cable CENTRONICS f/Printers	1071
Cable POWER 2 PIN	1339
Cable for CD-ROM	803
Connector RJ-45	1071
KEYBOARD	
K/b KB 8861, w/click	8670
K/b K8 click Win.95 104 smk8861	9690
Membrance Win.95,104 smk8001	9690
K/b CHICONY Win.95 104	8670
CASINGS	
Medium Tower 1821	25500
Mini Tower KN800 w/200W PS	41310
MPC 889 Multimedia White	61710
FDD	
FDD 3.5" MITSUMI	14790
MOUSE	
SPC 2 bt	3570
MITSUMI 2 bt	4080
FUNAI 2 bt (Ergonomic)	5100
Mouse pad with picture/color	1071
Mouse pad color fabric	536
DISKETTES	
3.5" 1.44 Mb TDK (carton)	459
MONITORS	
NOOS 14" 1430SL	102000
SAMSUNG 14" COB4147L	124950
FUNAI 14" 1448GA	114240
PRINTERS	
EPSON LX - 300	85680
EPSON LX - 1050+	153000
EPSON FX - 1170	239700
CANON BJC - 210 (color) A4 , 720x360 dpi , 40k , 3ppm	120360
CANON BJC - 210 SP (color) A4 , 720x360 dpi , 40k , 3ppm	126990
HP LJ 5L	269790
HP LJ 5L	1049070
Printers Accessories	
CANON BC-02 INK Cartridge	14280
CANON BC-02 INK Cartridge	14280
CANON BC-02 INK Cartridge	15300
MICROPHONE	
CREATIVE MC 1000	11730
MODEMS	
ZYXEL U-1496E+ 19.2 ext voice, V32,V42 MNP-4,V42bis MNP-5	132600
Prolinc 1414 les External	29580
COPIER	
CANON FC - 230	293250
TOSHIBA Main Equipment 1210	475830
TOSHIBA Main Equipment 1350	810900
COPIER & ACCESSORIES	
CANON FC-230	293250
TOSHIBA Main Equipment 1210	475830
TOSHIBA Main Equipment 1350	810900
TOSHIBA Black developer D-1210	13770
TOSHIBA Black toner T-1209P (1/10)	11730
TOSHIBA Black toner T-1350E (1/4)	16830
TOSHIBA Drum OD 1210	46410
Cartridge CANON E-16 f/FC-230	51000

ՏԵՍԱՁԱՅՆԱՍԱՐՔԵՐ

ՏԵՍԱՄԱԳՆԻՏՈՖՈՆ	
AKAI G 245 EDG	141625
AKAI G 420 EDG	139050
AKAI G 440 EDG	139050
FUNAI V 8008 CM	108150
PANASONIC SD - 300 AM	169950
PANASONIC NV - SD320 AM	190550
SONY SLV - X 315	149350
SONY SLV - X 715	180250
SAMSUNG SVR - 35D	133900
SAMSUNG SVR - 45D	141625
SAMSUNG SVR - 75D	159650
SAMSUNG SVR - 85D	169950
SHARP VC MA31	131325
SHARP VC MA33	128750
TOSHIBA V - E10	118450
TOSHIBA V - 204G	131325
TOSHIBA V - 405W	139050
TOSHIBA VK - 60J	249775

ՀԱՅՆԱԳՐՈՂ ՏԵՍԱՓԼԵՅԵՐ	
AKAI VS - R 160EDG	87550
AKAI VS - R 1700	95275
AKAI VS - R 88 K	95275
SAMSUNG SVR - 11G	86520
ՏԵՍԱՓԼԵՅԵՐ	
FUNAI VIP 5000 HC	72100
AKAI VS - P 1700	84975
ՏԵՍԱԽՑԻԿ	
SAMSUNG VP - H65	406850
SAMSUNG VP - H66	427450
SAMSUNG VP - H68	489250
SAMSUNG VP - K70	278100
SAMSUNG VP - K80	314150
ՖՈՏՈԽՑԻԿ	
SAMSUNG AF - SLIM Z	108150
SAMSUNG AF - SLIM Z1150	118450

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	
AKAI AC 300	162225
JVC MX - D 3S C/W	175100
JVC MX - D 4T C/W	190550
JVC MX - D 5T C/W	226600
JVC CA - S 700R	464530
ՄԱԳՆԻՏՈՖՈՆ	
JVC PC W 222	48925
PANASONIC RX - CT 870	64375
PANASONIC RX - CT 990	123600
Ա - ՓԼԵՅԵՐ	
AKAI PM - F75 A/P	61800
AKAI PM - R55 A/P	56650
CD - ՓԼԵՅԵՐ	
AKAI PDX65	59225
ԱԿՏՈՄԱԳՆԻՏՈՖՈՆ	
SONY XR - 1953 EE	100425

53-77-03
58-66-04

ԸՆԴՈՒՆԿՎՈՒՄ ԵՆ ԲՈԼՈՐ տեսակի տեխնիկայի նախնական պատվերներ

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ձեռնարկությունների մասին (առաջարկ, պահանջարկ) հեռախոսով: 589167, 581351:

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երևան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիլ 69149. Պատուր 658 Տպաքանակը 3000 Ստորագրված է տպագրության 5. 09. 1997 Գինը 100 դրամ